Թող նրանք աղոթեն Ինձ՝ զանազանելու համար

Երկուշաբթի, 2 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է հանգստանաս հիմա, քանի որ նրանց գրոհները, ովքեր չեն կարող ընդունել Իմ ճշմարիտ խոսքերը, շարունակվում են:
Քեզ թույլ չի տրվում պաշտպանել Իմ խոսքը, բայց հիմա Ես քեզ հրահանգ եմ տալիս չխոսել նրանց հետ, ովքեր կասկածում են Իմ խոսքին, քանի որ դա քո պարտականությունը չէ:
Աղջիկս, անկախ նրանից, թե որքան գայթակղիչ է ապացուցել Իմ Ամենասուրբ խոսքի վավերականությունը մարդկության համար այս ժամանակներում, դու չպետք է դա անես:
Ես ոչ մի պատասխան չտվեցի Ինձ մահվան դատապարտողներին Իմ խաչելության ընթացքում: Դու չպետք է փորձես պատասխանել նրանց, ովքեր ցանկանում են հետապնդել Ինձ Իմ պատգամների միջոցով:
Նրանք քեզ վրա չեն բարկացած, աղջիկս, այլ՝ Ինձ վրա:
Ես կարող եմ միայն աշխարհին ասել, թե ինչպես նախապատրաստվեն Իմ Երկրորդ Գալուստին: Ես չեմ կարող ստիպել նրանց:
Անտեսիր այդ խայթոցները: Դրանց մեծ մասն անկեղծ հոգիների կողմից են, ովքեր զգում են հարցեր տալու անհրաժեշտությունը: Բայց քեզ թույլ չի տրվում այդպես անել: Թող նրանք աղոթեն Ինձ՝ զանազանելու համար: Միայն Ես պատասխանատվություն ունեմ նրանց հոգիների հանդեպ: Նույնիսկ երբ դու առաջարկում ես տառապանքը հոգիներ փրկելու համար, դա դեռևս քո պարտականությունը չէ:
Ուստի գնա և ասա նրանց, ովքեր կասկածներ ունեն, ինչպես Իմ Թովմաս առաքյալը, որ այդ Ես էի, որ երևացի նրան Իմ հարությունից հետո, երբ կանգնեցի նրա առջև: Միայն Իմ վերքերին ձեռք տալուց հետո նա ամբողջապես հավատաց:
Ցավոք, աշխարհում շատ հոգիների չի տրվում այդ ճոխությունը:
Նրանք պետք է իմանան, որ ժամանակը կարճ է, որպեսզի նախապատրաստեն իրենց հոգիները: Նրանց ազատ կամքից է կախված՝ կպատասխանե՞ն Իմ կանչին, թե՞ ոչ:
Ձեր Հիսուս

Միայն բարեխոսության աղոթքների միջոցով կարող են այդ հոգիները փրկվել

Երեքշաբթի, 3 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, մի ժամանակահատված կա այժմվա և Նախազգուշացման միջև, որը Ես ցանկանում եմ, որ Իմ հետևորդները հասկանան:
Ձեր եռանդուն աղոթքների կարիքը կա՝ փրկելու համար այն հոգիներին, ովքեր ի վիճակի չեն իրենք իրենց փրկել: Այդ հոգիներից շատերը չեն դիմանա Նախազգուշացմանը, ուստի կարևոր է, որ նրանք, և բոլոր նրանք ովքեր մահացու մեղքի վիճակում են, փրկվեն Աստվածային միջամտության միջոցով:

Հիմա նրանց հոգիների համար ձեր բարեխոսության աղոթքների անհրաժեշտությունը կա: Սա պետք է առաջնահերթ լինի ձեզ համար հիմա Ավագ շաբաթվա ընթացքում, քանի որ երբ դուք խնդրեք Իմ Սիրելի Հորը Իմ Սուրբ Անվամբ այդ մեղավորներին փրկելու համար, ձեր աղոթքներին պատասխան կտրվի:
Աղոթքի խաչակրաց արշավանք (43) <<Փրկել հոգիներին Նախազգուշացման ժամանակ>>

Ով Աստված Ամենակարող Հայր
Քո Սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի անունից
և մեր մեղքերի փրկության համար խաչի վրա Նրա մահվան հիշատակը նշելու համար
ես խնդրում եմ Քեզ փրկել այն հոգիներին, ովքեր չեն կարող փրկել իրենք իրենց
և ովքեր կարող են մեռնել մահացու մեղքի մեջ Նախազգուշացման ընթացքում:

Քո սիրելի Որդու տառապանքներին ի հատուցում
Ես կոչ եմ անում Քեզ ներել նրանց, ովքեր չեն կարող
Թողություն փնտրել, որովհետև չեն ապրի այնքան, որ խնդրեն
Հիսուսին՝ Քո Որդուն, ազատել իրենց մեղքից:
Ամեն:

Աղոթեք բոլոր մեղավորների համար: Իմ ամենամեծ ցանկությունը մարդկությանը փրկելն է: Միայն բարեխոսության աղոթքների միջոցով կարող են խավարի մեջ գտնվող հոգիները փրկվել:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Խնդրում եմ աղոթեք Իմ Աստվածային Գթասրտության աղոթքը և սկսեք Իմ նովենան Ավագ ուրբաթ

Չորեքշաբթի, 4 ապրիլի, 2012թ, առավոտյան ժ 01:00

Իմ սիրելի աղջիկ, եկել է ժամանակը, որ աշխարհը մտածի Խաչի վրա Իմ Մահվան մասին:
Սա այն ժամանակն է 2012թ-ի ընթաղքում, երբ Ես հրատապ ձեր աղոթքների կարիքն ունեմ նրանց համար, ովքեր չեն ճանաչի Ինձ, և նրանց համար, ովքեր չգիտեն Իմ մասին:
Ձեզնից կախված կլինի, իմ սիրելի հետևորդներ, օգնելու Ինձ փրկել այդ խեղճ հոգիներին, որոնց Ես պետք է մոտեցնեմ Իմ կրծքին, որպեսզի կարողանամ նախապատրաստել նրանց Իմ Նոր Դրախտի համար:
Զավակներս, Ես կարիք ունեմ, որ դուք ասեք Իմ Աստվածային Գթասրտության աղոթքը և սկսեք Աստվածային Գթասրտության 9 օրյա նովենան Ավագ ուրբաթ օրվանից:

Կարևոր է, որ ձեզանից որքան հնարավոր է շատերն ավարտեն նովենան այդ հոգիների համար: Դուք կստանաք մեծ շնորհներ և դրա համար Ես երբեք չեմ լքի ձեզ: Ես կփրկեմ ձեր հոգին, երբ դուք Դատաստանի Օրը կանգնեք Իմ առջև:
Դուք երբեք չպետք է հոգնեք այլ հոգիների համար աղոթելուց: Դուք Իմ Բանակն եք, այն շնորհների միջոցով, որոնք Ես տալիս եմ ձեզ, դուք կաշխատեք Ինձ հետ՝ մաքրելու համար երկիրը Մեղքից նախքան Իմ Երկրորդ Գալուստը:
Ձեզ բոլորիդ համար հեշտ չէ աղոթել: Ամենալավ ձևը՝ ինքներդ ձեզ Իմ Վշտալի Տառապանքին միացնելն է և Իմ տառապանքի մասին մտորելը, հատկապես Իմ Հոգևարքի մասին Պարտեզում: Իմ Մեծ Գթասրտությունն առավելագույնն է:
Դուք, ովքեր սիրում եք Ինձ, իմացեք հետևյալը:
Որքան ամբողջապես վստահեք Ինձ, այնքան հզոր կլինի Իմ Գթասրտությունը: Այնքան ավելի շատ Ես կկարողանամ ներել: Իմ Գթասրտությունն այնքան զորեղ է, որ այն կարող է սրբել ողջ մարդկության մեղքերը:
Նրանք, ովքեր հավատում են Ինձ, վստահում են Ինձ, կարող են հասնել մեծ սրբության առաջին հերթին իրենց եղբայրների ու քույրերի հոգիները փրկել օգնելով: Նրանք անում են դա Իմ հանդեպ ունեցած իրենց սիրուց ելնելով, քանի որ գիտեն, որ դա Ինձ մեծ սփոփանք է պատճառում:
Դուք, Իմ մաքուր և արդար հետևորդներ, որ սիրում եք Ինձ այդքան շատ, իմացեք, որ ձեր սրտի առատաձեռնության հետևանքով է, որ Ես կարող եմ մեղավորներին փրկել: Դուք պետք է հասկանաք, որ մեղավորները նրանք են, որոնց համար Ես մեռա և որոնց Ես ամենից շատ եմ ծարավի: Ես մեծ կարեկցանք եմ ցուցաբերում մեղավորների հանդեպ:
Բայց դուք, Իմ հետևորդներ, որ նույնպես մեղավորներ եք, պետք է ամբողջապես Ինձ վստահեք: Այդ անելով, Ես ձեզ մի շարք յուրահատուկ շնորհներ եմ տալիս:
Որքան շատ Իմ օգնությունը խնդրեք, այնքան շատ կստանաք: Ձեր և Իմ միջև եղած կապի միջոցով է, որ դուք կարող եք օգնել Ինձ փրկելու այլ հոգիների վհատության և հուսալքության մեջ ընկղմվելուց:
Հիշեք Իմ Աստվածային Գթասրտության Նովենայի զորությունը և այն հոգիների թիվը, որոնք դուք կփրկեք Ինձ համար այս տարի:
Ձեր սիրող Հիսուս

Ավագ ուրբաթն այն օրն է, հատկապես այս տարի, որը Ես ցանկանում եմ, որ հիշվի որպես այն, ինչ իրականում նշանակում է

Հինգշաբթի, 5 ապրիլի, 2012թ, առավոտյան ժ 08:00

Ավագ ուրբաթն այն օրն է, հատկապես այս տարի, որը Ես ցանկանում եմ, որ հիշվի որպես այն, ինչ իրականում նշանակում է:
Իմ Հայրն ուղարկեց Ինձ աշխարհ և Ինձ առաջարկեց որպես փրկագին՝ աշխարհը Դժոխքի Կրակներից փրկելու համար:

Ես եկա ծառայելու ձեզ, զավակներս, այլ ոչ թե դատապարտելու: Իմ մահը մի յուրահատուկ շնորհ էր, ձեր կողմից առանց որևէ պարտավորության, բացի նրանից որ ընդունեք Իմ Գթասրտության ձեռքը՝ տրված ձեզ Իմ Հավիտենական Հոր կողմից:
Այս ընծան առաջարկվեց, հնարավոր դարձնելու համար, որ մարդկությունը ստանա հաշտության ընծան, որպեսզի կարողանան հարմար դառնալ Իմ Հոր Թագավորություն մտնելու համար:
Նախքան Իմ խաչվելը Ես մասնակցեցի մի շատ կարևոր Զատկի Ընթրիքի Իմ առաքյալների հետ, Խաչի վրա Իմ Մահվանը նախորդող գիշերը:
Վերջին Ընթրիքը տալիս է մեկ այլ ընծա: Սուրբ Հաղորդության ընծայի նշումը սիրո մի խորհուրդ է՝ ձեզ մի եզակի ընծայով ապահովելու համար, ուր դուք կարող եք ճշմարտապես ստանալ Ինձ Սուրբ Հաղորդության մեջ:
Իմ Սուրբ Հաղորդության մեջ պարունակվող Իմ ճշմարիտ ներկայությունը, երբ նշվում է Սուրբ Պատարագի ընթացքում, այսօր աշխարհում ապահովում է չափազանց յուրահատուկ շնորհներով նրանց, ովքեր շնորհի մեջ են, ովքեր սիրում են Ինձ, ովքեր ստանում են Ինձ:
Իմ ներկայությունը զգացվում է այնպիսի ձևով, որն ուժեղացնում է ձեր հավատը, երբ ընդունում եք Իմ ճշմարիտ ներկայությունը Սուրբ Հաղորդության մեջ:
Եթե մերժում եք Իմ ներկայությունը ՍուրբՀաղորդության մեջ, ապա դուք մերժում եք ամենանշանակալի ընծաներից մեկը, որը Ես թողեցի Ինձնից հետո, երբ եկա երկիր՝ ձեր մեղքերի քավության համար:
Ես մեռա ձեզ փրկելու համար, և սա ինքնին մի մեծ ընծա է:
Բայց Ես ձեզ թողեցի մի շատ յուրահատուկ ընծա, որը դուք կարող եք ստանալ Ինձ մտքով, մարմնով և ոգով:
Ընդունեք Իմ ներկայությունը, և ձեր հոգին ավելի կմոտենա Ինձ ճշմարիտ միության մեջ:
Ընդունեք Ինձ:
Մի լքեք Ինձ:
Մի մերժեք ԻՆՁ:
Հավատացեք առանց ձեր սրտի մեջ կասկածների, որ Հայր Աստծո սիրո պատճառով էր, որ այդ ընծաները հեղվեցին ձեզ վրա:
Մտորեք հիմա Իմ ուսուցումների իրական ճշմարտության մասին:
Մի ընդունեք Իմ Խաչելությունը առանց ընդունելու նաև այն ընծաները, որոնք առաջարկվեցին ձեզ Իմ Վերջին Ընթրիքի ժամանակ: Եթե մերժեք, ապա սովամահ կանեք ձեր հոգին կյանքի սնունդից:
Ձեր սիրող Հիսուս
Մարդկության Ազատարար

Զատիկը մի ժամանակ է, երբ խաչի վրա Իմ մահվան մասին խորհում են ինչպես հարկն է

Ուրբաթ, 6 ապրիլի, 2012թ.երեկոյան ժ 10:20

Իմ սիրելի աղջիկ, ինչպես ես դու սփոփում Ինձ Իմ վշտի ժամանակ: Ինչպես ես դու տալիս այն սերն ու հանգստությունը, որը Ես ցանկանում եմ հոգիներից: Ոհ եթե բոլոր

հոգիները միավորեին և միահյուսեին իրենց սրտերն Իմի հետ, Աստծո Սուրբ Ընտանիքն ամբողջապես ավարտուն կլիներ: Միայն այն ժամանակ, երբ բոլոր հոգիները փրկվեն, Իմ Հոր Աստվածային կամքը կկատարվի:
Զատիկը մի ժամանակ է, երբ խաչի վրա Իմ մահվան մասին մտածում են ինչպես հարկն է, և մեռածներից Իմ հարությունն ամբողջապես ընդունվում է այն ազատության համար, որը նա բերում է մարդկությանը:
Իմ հարությունը նշանակում է, որ դուք բոլորդ, ովքեր սիրում եք Ինձ և հռչակում Իմ Սուրբ Խոսքը, նույնպես կարող եք բարձրանալ մեռածներից: Բոլոր նրանք, ովքեր մահացել են շնորհի վիճակում և գտել Իմ Հոր բարեհաճությունը, նույնպես փառքով կբարձրանան մեռածներից այն օրը, երբ Ես կգամ դատելու: Նրանք կմիանան նրանց, ովքեր կենդանի են ոչ միայն մարմնով, այլև Տիրոջ հոգով, և կպարգևատրվեն հավիտենական կյանքով:
Շատերը չեն հասկանում Իմ խոստումը: Բոլոր նրանք, ում անունները պարունակվում են Կյանքի Գրքում, կբարձրացվեն մարմնով, մտքով և հոգով, ազատ՝ մարմնական քայքայումից և Ինձ հետ ամբողջական միության մեջ:
Այդ բոլոր ընտրյալները կապրեն Իմ Հոր Աստվածային Կամքին համապատասխան: Դուք կապրեք սիրո, խաղաղության և ներդաշնակության մեջ երկրի վրա Իմ փառահեղ թագավորման ընթացքում 1,000 տարի:
Դուք փառքով կմիանաք մեռածների հարությանը, ներառյալ ձեր ընտանիքի և ընկերների այն հոգիները, ովքեր հարմար կհամարվեն մտնելու Երկրի վրա Իմ նոր դրախտ:
Սա է այն կյանքը, որը դուք բոլորդ պետք է փնտրեք: Թող կասկած չլինի: Այն խեղճ հոգիները, ովքեր չեն կարողանում հավատալ Իմ գոյությանը կամ կենդանիներին ու մեռածներին դատելու Իմ խոստումին, նրանք կպոկեն իրենց մազերը, երբ կկանգնեն այն սարսափելի ճակատագրի առջև, որը կլինի նրանց առջևում, երբ ճշմարտությունը բացահայտվի:
Հավատացողները նույնպես պետք է զգույշ լինեն, ձեզնից շատերը, ովքեր Ինձ չեն սիրում բավարար չափով կամ չեն ընդունում ինչպես հարկն է, սխալմամբ հավատում են, թե Իմ գթասրտությունը անտեսում է մեղքերը, երբ զղջում չկա: Իմ գթասրտությունը լիառատ է: Ես ցանկանում եմ հեղել Իմ շնորհները յուրաքանչյուր մեղավորի վրա: Բայց կան նրանք, ովքեր իրենք իրենցից գոհ են այն կեղծ դրույթով, թե Իմ մասին իրենց գիտելիքները բավարար են իրենց փրկելու համար: Նրանք անտարբեր են Իմ սիրո հանդեպ: Նրանց պակասում է քնքուշ սիրտը, նրանք քիչ խոնարհություն ունեն իրենց հոգիների մեջ և հավատացած են, թե որոշ մեղքերի համար թողություն խնդրելու կարիք չկա: Այդ մտածողությունը վտանգավոր է և ծառայում է միայն նրան, որ այդպիսի հոգիներին ավելի է հեռացնում Ինձնից:
Չկա ոչ մի այնքան փոքր մեղք, որը կարելի է անտեսել: Թողություն կարող է տրվել միայն այն ժամանակ, երբ ապաշխարում եք: Դուք կարող եք ապաշխարել միայն այն ժամանակ, երբ ազատ եք հպարտությունից և խոնարհ եք սրտով:
Ուրախացեք, զավակներս, այս Զատիկին, ճիշտ ինչպես խաչի վրա Իմ մահը տվեց ձեզ փրկության ընծան, մեռածներից Իմ Հարությունն է, որ ձեզ կտա նաև հավիտենական կյանքը, որը նախատեսված է եղել Իմ Հավիտենական Հոր կողմից վաղուց ի վեր:
Դուք շատ բան պետք է ակնկալեք, քանի որ ձեզ խոստացված հավիտենական կյանքը նշանակում է հենց այդ Հավիտենական Կյանքը մարմնով, մտքով և հոգով:
Կարևոր է որ ձգտեք այդ նոր կյանքին և նախապատրաստեք ձեր հոգիները:

Սատանան և նրա չարքերը ամեն փորձ կանեն՝ համոզելու համար ձեզ, որ հավիտենական կյանք Իմ նոր դրախտում գոյություն չունի: Որ Իմ Երկրորդ Գալուստը սուտ է: Քահանաները, եկեղեցու անդամները, նվիրյալ քրիստոնյաները կլինեն առաջին թիրախը: Աղոթեք, աղոթեք, աղոթեք Իմ Հավիտենական Հորը որ պաշտպանի ձեզ Իմ թանկագին արյամբ, որպեսզի ձեզնից ոչ մեկը չհեռանա ճշմարտությունից:
Ձեր սիրող Հիսուս Քրիստոս
Մարդկության Ազատարար

Ես Եկեղեցին եմ: Եկեղեցին հիմնադրվել է Իմ կողմից և այն չի կարող մեռնել

Շաբաթ, 7 ապրիլի, 2012թ, առավոտյան ժ 10:00

Իմ սիրելի աղջիկ, հերձվածությունը, որի մասին Ես խոսել եմ, սկսվել է կաթոլիկ եկեղեցում:
Իմ ուսուցումներին, որոնք երբեք չեն փոխվել այն ժամանակից ի վեր ինչ Իմ Սուրբ Գրվածքներն ավարտվեցին Հայտնության Գրքով, հիմա մարտահրավեր են նետում: Դարերի ընթացքում եղել են Իմ Սուրբ Խոսքի նկատմամբ մի քանի մարտահրավեր, կարծիքներ և աստվածաբանական գնահատումներ:
Շատ լավ մարդիկ են հարցականի տակ դնում այն հրահանգներն ու ուսուցումները, որոնք Ես տվել եմ մարդկությանը:
Իմ որոշ ուսուցումներ մասնատվել են, վերլուծության ենթարկվել, նոր մեկնաբանությունն են փնտրվել, իսկ հետո՝ ընդունվել:
Սակայն դրա կարիքը չի եղել: Քանի որ ճշմարտությունը տրվել է մարդուն մարգարեների կողմից, ովքեր եկել են Ինձնից առաջ, իսկ հետո՝ Իմ կողմից՝ երկրի վրա Իմ գտնվելու ժամանակ:
Ճշմարտությունը երբեք չի փոխվել: Ճշմարտությունը պարզ է:
Այլ տեղեկատվություն, որը չի պարունակվում Սուրբ Գրվածքների մեջ, տրվել է աշխարհին որպես ընծա ընտրյալ հոգիների միջոցով միայն մեկ նպատակով: Օգնելու համար ձեզ՝ խորհել մարդկության համար արված Իմ զոհաբերության մասին և ձեզ ցույց տալու և հիշեցնելու այն սիրո մասին որը Ես ունեմ Իմ սրտում Աստծո բոլոր զավակների հանդեպ:
Այսօր աշխարհին տրվող ցանկացած աստվածային հայտնություններ այն նպատակով են, որ օգնեն ձեզ նախապատրաստվելու Հավիտենական Կյանքին:
Իմ ուսուցումները, որոնք պատվի են արժանանում Սուրբ կաթոլիկ և առաքելական եկեղեցու կողմից, հիմա առաջինն են հարձակման ենթարկվում բազմաթիվ մարտահրավեներից, որոնք կհանգեցնեն եկեղեցու բաժանմանը:
Նոր օրենքներ կներմուծվեն, հարմարվելու համար ժամանակակից կարծիքին, և այնպես, որ հարմար լինեն նրանց ովքեր, հպարտությունն իրենց հոգիներում, ավելի շատ կարիք են զգում հանգստացնել մարդկությանը, քան թե ենթարկվել եկեղեցու ուսուցումներին:
Ես Եկեղեցին եմ: Եկեղեցին հիմնադրվել է Իմ կողմից և այն երբեք չի կարող մեռնել:

Շատերը, ինչպես Եկեղեցու ներսից, այնպես էլ դրսից, կփորձեն տապալել նրա կառույցը:
Աղոթեք, որ Իմ Սուրբ Երեց Բենեդիկտ XVI-ը ուժեղ մնա այն ընդդիմության մեջ, որի դեմ նա հիմա կանգնած է:
Սա մի կանխամտածված փորձ է նրանց կողմից, ովքեր կապվել են Կեղծ Մարգարեի հետ՝ ստեղծելու մի նոր եկեղեցի:
Այդ խորամանկ մարդիկ կստիպեն ձեզ հավատալ, թե դա նույն եկեղեցին կլինի, բայց դա չի կարող լինել:
Ինչպե՞ս կարող է Իմ Եկեղեցին ներկայացնել Ինձ նոր օրենքներով, որոնք Իմ կողմից աշխարհին տրված ճշմարտության շրջված տարբերակներն են:
Այն չի կարող: Ահա թե ինչու Իմ Հայրը Երկնքից ուղղություն կտա Իմ Եկեղեցուն՝ ճշմարիտ նվիրված հավատացողներին:
Նա կպահի բանալիները մինչև Երկրորդ Գալուստը, երբ Նոր Երուսաղեմը՝ միակ ճշմարիտ Կաթոլիկ Եկեղեցին, կբարձրանա մոխիրներից, որպեսզի վերականգնվի որպես մեկ Աստծո բոլոր զավակների, բոլոր կրոնների, բոլոր հավատամքների կողմից:
Այս կերպ է այն նախատեսված որ լինի ամբողջական և վերջնական միության մեջ երկրի վրա Խաղաղության Նոր Դարաշրջանում:
Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Երկինքն ու երկիրը կդառնան մեկ. Մեկը գոյություն չի ունենա առանց մյուսի

Կիրակի, 8 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, երկրի վրա Իմ թագավորելու ժամանակն ավելի է մոտենում, և մարդկության համար միայն այնքան ժամանակ կա, որ ընկալեն Իմ գթասրտությունն ու ապաշխարեն:
Կարևոր է նաև, որ Իմ Եկեղեցին նախապատրաստի իր հոտը հավիտենական կյանքի համար և օգտագործի յուրաքանչյուր հնարավորություն՝ հաշտությունը խրախուսելու համար:
Սա տարվա կարևոր ժամանակահատված է, և դուք պետք է շրջվեք դեպի Ինձ՝ ձեր Հիսուսը, և աղոթեք շնորհների համար, որպեսզի վստահանաք, որ դուք, Իմ հետևորդներ, ունեք համոզմունքի ուժը՝ Իմ Երկրորդ Գալուստի մասին ճշմարտությունը տարածելու համար:
Մարդկության տառապանքը և Իմ Հավիտենական Հոր և Իմ՝ Նրա Սիրելի Որդու տառապանքը վերջապես ավարտին է մոտենում:
Սատանայի իշխանությունը երկրի վրա կդադարի, և Ես կվերցնեմ իրավամբ Ինձ պատկանող գահը:
Մինչ Իմ Եկեղեցու ներսում Իմ թագավորումը նշանակում է, որ Իմ Հոգին ներկա է՝ առաջարկելով մեծ շնորհներ արժանի հոգիներին, սակայն մինչև Սատանան չկապվի, Իմ Հոր կամքը չի կարող վերջնակապես կատարվել:
Ոչ մի մարդ ճշմարտապես չի հասկանում, թե ինչ է Հավիտենական Կյանքը:

Ոչ մի մարդ ամբողջապես չի հասկանում, թե ինչ տեղի կունենա Իմ Երկրորդ Գալուստի ժամանակ:
Ոչ մի մարդ, մարդկային հասկացողության սահմանափակ լինելու պատճառով, չի կարող իմանալ **երկրի վրա տասներկու ազգերին հավաքելու Իմ պլանների մասին:**
Այնքան շատերն են հավատում, թե Իմ Երկրորդ Գալուստն աշխարհի վերջն է:
Դա կլինի ձեր իմացած ժամանակների վերջը, սակայն այն միայն սկիզբն է այն փառահեղ ապագայի, որը պլանավորված է Իմ Հավիտենական Հոր կողմից Իր բոլոր զավակների համար:
Երկինքն ու երկիրը կդառնան մեկ:
Մեկը գոյություն չի ունենա առանց մյուսի: Արդարները կապրեն Իմ Նոր Դրախտի մեջ, և ամեն բանի շատ առատություն կլինի:
Այդչափ շատ հրաշքը հնարավոր չէ նկարագրել մարդկային տերմիններով:
Յուրաքանչյուր հոգի, ով կժառանգի Իմ Թագավորության մասը լինելը, կզգա մեծ խաղաղություն և ուրախություն:
Իմ սիրտը կոտրվում է, երբ Ես վախ եմ տեսնում ձեր աչքերում, զավակներս, երբ խոսում եմ վերջին ժամանակների մասին:
Դրա փոխարեն Ես ձեզ խնդրում եմ, որ վստահեք ձեր բոլորի հանդեպ Իմ ունեցած մեծ սիրուն և իմանաք, որ Իմ խոստումը սա է, որ դուք ճշմարիտ կլինեք տանը Ինձ հետ, և ձեր վշտերը հավիտյան կաքսորվեն:
Նոր Դրախտը, որը Ես խոստանում եմ, շատ շուտով կբացահայտվի մարդկությանը:
Ոչ մի պահ մի կորցրեք վախի մեջ: Ուրախացեք, առաջ նայեք դեպի ձեր ապագան:
Ամբողջապես Ինձ վստահեք, քանի որ Ես ձեզ չփձազանց շատ եմ սիրում որ երբևե թողնեմ ձեզ:
Աղոթեք, որ Իմ բոլոր զավակները լինեն սրտով խոնարհ՝ընդունելու համար Դրախտի բանալիները:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Խաղաղության դարաշրջանը, որի մասին Ես խոսեցի Ֆաթիմայում, մոռացվել է

Երկուշաբթի, 9 ապրիլի, 2012թ, առավոտյան ժ. 10:00

Ձավակս, աշխարհը պատրաստվում է ենթարկվել վերջնական փոփոխությունների, մինչ հոգիների համար մարտն ուժգնանում է:
Սատանան կվնասի Կաթոլիկ Եկեղեցուն, և Ես՝ Աստծո Մայրը կներգրավվեմ Եկեղեցու բաժանման մեջ:
Կաթոլի Եկեղեցու բաժանումներում չի ճանաչվում Իմ դերը որպես Համա-Ազատարար, Միջնորդ, Պաշտպան:
Շատ տեղերում չեն ընդունում **Իմ դերը որը Ես պետք է ունենամ հոգիների փրկության գործում:**
Իմ խեղճ Որդին այնքան վիրավորված է այն բանից, թե ինչպես են Ինձ՝ Աստծո Մորը, հեռացրել:
Իմ դերը՝ որպես օձին կործանող, չի հասկացվել:
Ինձ օրհնությամբ տրվել են շնորհներ և զորություն, որ հաղթեմ և ոչնչացնեմ Չարին:

Նա՝ Չարը, շատ հետևորդներ ունի Կաթոլիկ Եկեղեցու ներսում, ովքեր ցանկանում են հակառակվել այն զորությանը, որը տրվել է Ինձ Ամենաբարձրյալ Աստծո կողմից:
Խաղաղության Դարաշրջանը, որի մասին Ես խոսել եմ Ֆաթիմայում, մոռացվել է:
Խաղաղության այդ դարաշրջանը կլինի Իմ Որդու Երկրորդ Գալուստից հետո և կտևի 1,000 տարի:
Սա տեղի կունենա, երբ Երկինքն ու Երկիրը կմիավորվեն կդառնան մեկ փառապանծ Նոր Դրախտ:
Իմ զավակների հավատի և Իմ՝ իրենց սիրող Մոր հանդեպ նրանց ունեցած նվիրվածության պատճառով, շատ հոգիներ ներս կմտնեն Նոր Դրախտ:
Սատանան հիմա շատ է աշխատում համոզելու համար Կաթոլիկ Եկեղեցու անդամներին , որ դա չի լինի:
Իմ դերը՝ որպես Փրկության Մայր և Համա-Ազատարար, որ աշխատում եմ Իմ Սիրելի Որդու կողքին Երկրորդ Գալուստն ազդարարելու համար, մերժվում է:
Զավակներս, աղոթեք, որ Կաթոլիկ Եկեղեցու ներսում գտնվող այդ հոգիները, որոնք խաբեբայի զոհերն են, չհեռացնեն Իմ զավակներին իրենց փրկության պահից:
Աղոթեք, որ Բենեդիկտ պապը կարողանա կանգնեցնել այդ չարիքը Կաթոլիկ Երեղեցում տարածելուց:
Երբեք տեղի չտաք, զավակներս, ճշմարտության համար կանգնելու ձեր պայքարում:
Իմ Որդու խոստումը՝ վերադառնալու մասին, որպեսզի մարդկությանը բերի հավիտենական կյանքի Դրախտում, պատրաստ է կատաարվելու: Սակայն Նրան կհակառակվեն ճանապարհի յուրաքանչյուր քայլափոխի այն հոգիները, ովքեր թույլ են տվել որ Չարի խաբեությունը շրջի իրենց գլուխները:
Իմ Որդու հանդեպ հավատարմությունը կթուլանա Եկեղեցու ներսում:
Իմ դերը որպես Համա-Ազատարար, Միջնորդ, Պաշտպան, չի ընդունվի:
Աղոթեք, որ Իմ Որդու քահանաներն ուժեղ մնան և պաշտպանեն ճշմարտությունը:
Ձեր սիրող Մայր
Մայր Աստծո

Կույս Մարիամ. Օձին ճզմելու Իմ ժամանակն ավելի է մոտենում

Ուրբաթ, 13 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 05:57

Ես ձեր սիրող Մայրն եմ՝ Երկրի Թագուհին: Ես Անարատ Հղացյալն եմ, Կույս Մարիամը, Հիսուսի Մայրը, ով եկավ մարմնով:
Զավակս, Իմ Անապական Սրտի հաղթանակի ժամանակը մոտ է:
Օձին ճզմելու Իմ ժամանակն ավելի է մոտենում: Բայց նախքան այն օրը, երբ Սատանան և նրա չարքերը կնետվեն անապատ, շատ շփոթություն դուրս կգա երկրի վրա:
Իմ Որդուն հավատացողների համար դա կլինի տառապանքի ժամանակ: Նրանք Կաթոլիկ Եկեղեցու կողմից կձգվեն երկու տարբեր ուղղությունների վրա:
Մի կեսը, պարտականությունից ելնելով, կհավատա Կեղծ Մարգարեին հետևելու անհրաժեշտությանը, ով կհաջորդի Բենեդիկտ XVI-ին:

Նա՝ Գազանը, հագնված է գառան պես, սակայն Իմ Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո կողմից չէ, և կհիմարացնի խեղճ հոգիների՝ ներառյալ քահանաների, եպիսկոպոսների և կարդինալների:
Շատերը կհետևեն նրան և կհավատան, թե ուղարկված է Աստծո կողմից երկրի վրա Նրա Եկեղեցին ղեկավարելու համար:
Ցավալի է, բայց շատ հոգիներ կհետևեն նրա ուսուցումներին, որոնք վիրավորական կլինեն Իմ Հոր համար:
Մյուսները, լցված Սուրբ Հոգով և ստացած լինելով զանազանության շնորհները՝ իրենց հոգու խոնարհության պատճառով, **անմիջապես կիմանան, որ Հռոմի Եկեղեցում նստած է մի ինքնակոչ:**
Նոր կեղծ Պապը ծրագրում է, նույնիսկ նախքան Պետրոսի աթոռին նստելը, մերժել Իմ Որդու ուսուցումները: Հետո նա կմերժի Ինձ՝ Աստծո Օրհնյալ Մորը և կծաղրի Իմ դերը որպես Համա-Ազատարար:
Զավակս, քո դերը հիմա նույնիսկ ավելի դժվարին է դառնալու, քան նախկինում: Քանի որ Իմ զավակներից շատերը շփոթության մեջ են: Վիրավորանքները, որոնք դու կրում ես ամեն օր, տառապանքները, որոնց դու դիմանում ես ամեն օր, կավելանան:
Երբեք մի վախեցիր աշխարհին ասել ճշմարտությունը, զավակս:
Դու ավելի ես ուժեղանում այն ֆիզիկական և մտավոր տառապանքի արդյունքում, որն ընդունում ես հանուն Իմ Սիրելի Որդու՝ հոգիներ փրկելու համար:
Ամեն ջանք կարվի, հատկապես Կաթոլիկ Եկեղեցու մի մասի կողմից, քեզ տրված Իմ պատգամները հեռացնելու համար:
Իմ և Իմ Սիրելի Որդու հանդեպ քո հնազանդությունն ու հավատարմությունը փորձության կենթարկվի ինչպես երբեք: Սա կտանի նրան, որ դու հեռանաս, սակայն եթե դա տեղի ունենա, ապա երկար չի տևի:
Աղոթիր, զավակս, Աստծո բոլոր զավակների համար, ովքեր ոչ իրենց մեղքով ներքաշվում են հոգիների համար մղվող վերջնական մարտի մեջ:
Այս ամենը պետք է կատարվի, քանի որ այն պարունակվում է Իմ Հոր Գրքի մեջ:
Երկնքի բոլոր հրեշտակները պաշտպանում են քեզ, զավակս, այս ինչ-որ տեղ միայնակ առաքելության մեջ:
Միշտ հիշիր, թե որքան կարևոր է աղոթքը:
Աղոթիր, աղոթիր, աղոթիր, քանի որ առանց աղոթքի, հատկապես Իմ Սուրբ Վարդարանն ասելու, Սատանան կարող է քեզ հեռու քաշել Իմ Թանկագին Որդու Սուրբ Խոսքից:
Հիշիր նաև ծոմապահության կարևորությունը, քանի որ այն տարածության վրա է պահում խաբեբային:
Առանց կանոնավոր աղոթքի, զավակներս, ձեզ համար դժվար կլինի մոտ մնալ Իմ Որդուն:
Երբեք մի վախեցեք ապագայից, զավակներս, քանի որ եթե մնաք Իմ Որդուն մոտիկ, դուք պաշտպանված կլինեք և ձեզ կտրվեն այն շնորհները, որոնք անհրաժեշտ են նախապատրաստելու համար ձեր հոգիներն ու ձեր ընտանիքի անդամներինը այնքան վաղուց կանխասացված Խաղաղության Նոր Դարաշրջանի համար:
Ձեր սիրող Մայր
Երկրի Թագուհի
Մայր Փրկության

Քո հանդեպ ատելությունը կաճի: Քեզ կասեն, թե այս աշխատանքը Սատանայից է

Չորեքշաբթի, 11 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 09:20

Իմ սիրելի աղջիկ, այդ ինչպե՞ս է որ դու երբեմն հարցականի տակ ես դնում այն շնորհները, որոնք Ես տվել եմ քեզ:
Քեզ տրվել է հոգիներ կարդալու ընծան, որպեսզի կարողանաս զանազանել այն խեղճ հոգիների մտադրությունները, ովքեր կփորձեն վնասել Իմ Սուրբ Խոսքը:
Այս ընծան հնարավորություն կտա քեզ կարեկցանք զգալ այդպիսի հոգիների հանդեպ և օգնել նրանց գտնելու դեպի հավիտենական կյանք տանող ճշմարիտ ուղին և ազատել նրանց հոգիներին այն տառապանքից, որ կրում են:
Այս ընծան նաև կօգնի քեզ ճանաչել կեղծ մարգարեներին:
Դու անմիջապես կիմանաս, թե ով է գալիս Իմ անվամբ, իսկ ով՝ ոչ:
Սկզբում դու կզգաս վախի սարսափելի սուզվող զգացողություն, քանի որ կճանաչես Սատանայի գործը: Դու անմիջապես կիմանաս, երբ նա ներկա լինի այլոց մեջ:
Երբ նա գրոհի քեզ, ուրիշների միջոցով, դու այնպիսի զգացողություն կունենաս, ասես հարվածել են ստամոքսիդ:
Դու նողկանք կզգաս, երբ դեմ առ դեմ հանդիպես մեկին, ում հոգին գողացել է Սատանան, և դու կդողաս ու գլխապտույտ կունենաս:
Այնուամենայնիվ դու կխոսես այդպիսի հոգիների հետ Իմ խոսքերով և այնպիսի զորությամբ, որը կհասկանաս որ քո սեփականը չէ:
Շատերը, ովքեր կգան քեզ մոտ մաքուր հոգով, կզգան լույսը, և իրենց մարմինների մեջ ներթափանցող Իմ ներկայությունը:
Շատ քիչ կլինեն նրանք, ովքեր խոնարհ են սրտով և խորը սեր ունեն Իմ հանդեպ, բայց չեն կարողանա արձագանքել Իմ Սուրբ Հոգուն, որը հեղեղել է քո հոգին:
Աղջիկս, սա հիմա քո առաքելության այլ էտապ է:
Քո հանդեպ ատելությունը կաճի:
Քեզ կասեն, թե այս աշխատանքը Սատանայից է:
Մի՞թե չգիտես, թե ինչպես է Սատանան՝ խաբեբան, աշխատում: Երբ Իմ խոսքը խոսվում է, նա համոզում է բարի հոգիներին, որ այդ Ինձնից չէ:
Նա իրենից վախեցողներին փորձում է այդ նույն վախի միջոցով համոզել, որ ուրիշների մոտ կան իրեն բնորոշ գծերը:
Նա կասկածներ և ընճվածություն է առաջացնում հոգիների մեջ՝ նրանց խաբելով: Ճշմարտության հանդեպ նրանց կուրացնելով և արգելելով նրանց ստանալու այն շնորհները, որոնք նախատեսվել են Իմ կողմից նրանց հոգիները սրբագործելու համար:
Նա ամենաշատը հարձակվում է նրանց վրա, ովքեր ամենաշտն են մոտիկ Ինձ:
Սա ներառնում է ոչ միայն տեսանողներին և մարգարեներին, այլ հենց այն հոգիներին, որոնց կարիքը Ես ունեմ Իմ Բանակի ձևավորմանն օգնելու համար:
Այդ բանակը պարտության կմատնի Սատանային: Նա գիտի այդ և երբեք չի դադարի հոգիներ որոնելուց:

Սակայն հիշեք սա. Սատանան չունի այն զորությունը, որը Ես ունեմ: Նա չի կարող հաղթել Սուրբ Երրորդությանը: Նա անզոր է Իմ Մոր հանդեպ, ում իշխանություն է տրված ոչնչացնել նրան: Նա վախենում է Նրանից:
Բոլոր նրանք, ովքեր կասկածում են այս պատգամների միջոցով տրվող Իմ խոսքին, խնդրում եմ, խնդրեք Իմ Սիրելի Մորը, որ ձեզ ավելի մոտեցնի Իր Սրբազան Սրտին: Խնդրեք Նրան (Սուրբ Մորը) որ ծածկի ձեզ Իր Սուրբ Թիկնոցով և ձեզ տա այն պաշտպանությունը, որի կարիքն ունեք Չարից պաշտպանվելու համար:
Հիշեք, Չարը լի է ատելությամբ:
Երբ ձեր սրտում որևէ տեսակի ատելություն եք տեսնում, հատկապես Իմ սուրբ պատգամատարների հաղեպ, իմացեք որ Սատանան գայթակղեցրել է ձեզ մեղք գործելու համար:
Այդ ժամանակ է, որ պետք է խնդրեք Ինձ այն շնորհները, որոնք ձեզ ուժեղ կպահեն:
Հիշեք, Ես երբեք մեջքս չեմ դարձնի ձեզնից ոչ մեկին, ներառյալ նրանց, ովքեր ատում են Իմ պատգամաարներին, նաև այն հոգիներին, ովքեր մերժում են Ինձ:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Հաջորդ Պապը կընտրվի Կաթոլիկ Եկեղեցու անդամների կողմից, սակայն նա կլինի Կեղծ Մարգարեն

Հինգշաբթի, 12 ապրիլի, 2012թ, առավոտյան ժ 11:27

Իմ սիրելի աղջիկ, աշխարհում շատերն են դեռևս մերժում Ինձ, և դա կապված է հասարակական կարծիքի հետ:
Այնքան շատ խավար է իջել Աստծո բոլոր զավակների վրա, որ շատ քչերն ունեն արիությունը հրապարակայնորեն հռչակելու համար Իմ Խոսքը:
Հավատացողները վախենում են մեղադրանքից և թունավոր ծաղրից, որը ստիպված կլինեն կրել, եթե բացահայտորեն խոսեն Իմ Սուրբ Խոսքի մասին:
Նույնիսկ նվիրված հետևորդներն այնքան նյարդեր չունեն, որ ոտքի կանգնեն ու պայքարեն այն չար օրենքների դեմ, որոնք ընդունվում են իրենց երկրներում և որոնք անտեսում են Իմ Հոր Խոսքը:
Քահանաները վախենում են ոտքի կանգնել Իմ ուսուցումների ճշմարտության համար՝ վախենալով արտաքսումից:
Հիմա առավել քան երբևէ նրանք հասկանում են, որ իրենց ձայնը հնարավոր չէ որ լսվի այն ամոթի պատճառով, որն իրենք ստիպված են կրել իրենց սեփական միաբանությունների որոշ ներկայացուցիչների չար մեղքերի պատճառով:
Երբ որևէ քաջ սրբազան սպասավոր որոշում է ոտքի կանգնել և պաշտպանել Իմ ուսուցումների ճշմարտությունը, նա սարսափելի կերպով տառապում է: Նրան մեղադրում են հանդուրժողականության պակասի, կարեկցանքի պակասի, սիրո պակասի և մարդու իրավունքների հանդեպ հարգանքի պակասի մեջ:
Հասկանու՞մ եք, զավակներս, որ Իմ սրբազան սպասավորների միջոցով ասվող Իմ ուսուցումների ճշմարտությունը համարում են սուտ:
Դրա փոխարեն ստերը՝ Իմ Սուրբ Գրվածքներում պարունակվող ճշմարտության շրջված տարաբերակները, ներկայացվում են որպես ճշմարտություն:

Սատանան գրավել է այնքան շատ հոգիներ, ներառյալ առաջնորդների, Իմ սեփական Եկեղեցու ներսում, որը նշանակում է որ շատ անմեղ մարդկանց համար դժվար է հավատարմության երդում տալ Իմ Սուրբ Խոսքին:

Ինչպես են Ինձ լքել և մի կողմ հրել թույլ տալու համար, որ Իմ սրբազան սպասավորների մտքերի մեջ ցանված ստերը ընդունվեն մեծամասնության կողմից: Այդ չար ստերն անցնում են դրանից այն կողմ:

Հայտնության Գրքում պարունակվող Իմ Գրվածքների ճշմարտությունը մեկնաբանվել է Իմ շատ եկեղեցիների կողմից: Այնքան շատ շեղումներ կան, որոնք բոլորը հիմնված են մարդկային մեկնաբանության վրա:

Իմ սիրելի Բենեդիկտ XVI Պապը վերջին ճշմարիտ Պապն է այս երկրի վրա:

Հռոմի Պետրոսը (Peter the Roman) Իմ Պետրոսն է՝ իսկական առաքյալը, ով կղեկավարի Իմ Եկեղեցին Երկնքից Իմ Հավիտենական Հոր հրամանատարության տակ: Հետո Ես կգամ թագավորելու, Երկրորդ Գալստյան ժամանակ, նա կղեկավարի Աստծո բոլոր զավակներին, երբ բոլոր կրոնները կդառնան մեկ Սուրբ Կաթոլիկ և Առաքելական Եկեղեցի:

Ես խոսում եմ միայն ճշմարտությունը, աղջիկս:

Ես պետք է նախազգուշացնեմ քեզ, որ հիմա դուրս կգան շատ ինքնակոչ մարգարեներ, ովքեր կհակասեն քեզ՝ վերջին ժամանակների ճշմարիտ մարգարեին տրված Իմ Սուրբ Խոսքին:

Սկզբում նրանք կհամոզեն հավատացողներին, թե իրենց խոսքերը գալիս են Ինձնից: Նրանց խոսքերը կլինեն զգուշորեն ընտրված, իսկ դրանց իմաստը կլինի անորոշ և մի քիչ շփոթեցնող: Շատերը կգնան այդ թուլության ետևից և կգրկեն նրանց պատգամները, որովհետև դրանք կթվան Սուրբ Գրքերին համընթաց:

Երբ նվաճվեն շատ հոգիներ, գրոհը կսկսվի:

Նրանք, աղջիկս, ուղարկվում են, որ նախապատրաստեն Աստծո զավակներին՝ ընդունել հաջորդ Պապին, ով կգա Իմ սիրելի Երեց Բենեդիկտ Պապից հետո: Պապը կընտրվի Կաթոլիկ Եկեղեցու անդամների կողմից, բայց նա կլինի Կեղծ Մարգարեն: Նրան ընտրողները գայլեր են՝ գառան մորթով, և Սատանայի կողմից առաջնորդվող գաղտնի մասոնական և չար խմբի անդամներ են:

Ահա թե ինչպես Սատանան կփորձի ոչնչացնել Իմ Եկեղեցին:

Ցավոք, նա՝ Կեղծ Մարգարեն, մեծ քանակով հետևորդներ կգրավի: Նրանք, ովքեր կհակառակվեն նրան, կհալածվեն:

Փախեք, զավակներս, քանի դեռ կարող եք: Մերժեք այն ստերը, որոնք կներկայացվեն նրանց կողմից, ովքեր կփորձեն ձեզ համոզել Կեղծ Մարգարեի ճշմարիտ (վավերական) լինելու մեջ:

Ուժեղ եղեք: Հավատարիմ մնացեք Ինձ՝ ձեր Հիսուսին: Երբեք մի կասկածեք Իմ Սուրբ Խոսքին:

Հայտնության ԳԻՐՔԸ Աստծո ճշմարիտ խոսքն է: Այն չի ստում:

Ձեզ դեռևս հայտնի չեն նրանում պարունակվող բոլոր գաղտնիքները: Ես բոլորը կբացահայտեմ Մարիա Աստվածային Գթասրտության միջոցով, չնայած ճշմարտությունը կտրականապես հարձակման կենթարկվի և կհամարվի հերետիկոսություն:

Հիշեք մի կարևոր դաս: Իմ Խոսքին, երբ Ես երկրի վրա էի, վերաբերվեցին որպես հերետիկոսություն, երբ Ես եկա առաջին անգամ:

Իմ Խոսքը, որը հիմա տրվում է ձեզ, Իմ Երկրորդ Գալուստի ժամանակ նույնպես այդպիսին կհամարվի հավատացողների կողմից, ներառյալ Իմ սրբազան սպասավորների, ովքեր ներկայացնում են Իմ Եկեղեցին երկրի վրա:
Սատանան շատ հոգիներ կզոհաբերի բավարարելու համար իր վերջնական փափագը՝ ամենամեծ կսկիծը պատճառելու նպատակով:
Վստահ եղեք, որ Իմ կողմից հիմնված և Իմ սիրելի առաքյալ Պետրոսի հրամանատարության տակ դրված Կաթոլիկ Եկեղեցին է, որ ամենաշատը կտառապի վերջին ժամանակներում:
Զգոն եղեք միշտ: Խնդրում եմ ասեք խաչակրաց արշավանքի այս աղոթքը (44) Ուժ՝ պաշտպանելու համար իմ հավատը Կեղծ Մարգարեից.
Սիրելի Հիսուս, տուր ինձ զորությունը կենտրոնանալու Քո ուսուցումների վրա
և միշտ հռչակելու Քո Սուրբ Խոսքը,
երբեք թույլ մի տուր ինձ գայթակղվել՝ կռապաշտելու Կեղծ Մարգարեին,
ով կփորձի իրեն ներկայացնել որպես Դու,
ուժեղ պահիր Քո հանդեպ իմ սերը,
տուր ինձ զանազանության շնորհները, որպեսզի ես երբեք չժխտեմ
Սուրբ Աստվածաշնչում գտնվող ճշմարտությունը անկախ նրանից թե որքան
Ստեր կներկայացվեն ինձ՝ խրախուսելու համար, որ մեջքս շրջեմ Քո Սուրբ Խոսքի հանդեպ:
ԱՄԵՆ:

Ճշմարտությունը գրված է Սուրբ Գրքերում:
Հայտնության Գիրքը չի բացահայտում ամեն ինչ, որովհետև Ես միայն հիմա եմ գալիս, Աստծո Գառը, որ բացեմ գիրքը, որպեսզի աշխարհը տեսնի:
Չպետք է վստահել 1,000 տարվա մասին մարդկային ոչ մի մեկնաբանության:
Դուք պետք է միայն վստահեք Աստծո խոսքին:
Ձեր սիրող Հիսուս

Այնքան շատ ստերը, ուր Դժոխքի գոյությունը մերժվում է, կլինեն քրիստոնյաների անկման պատճառ

Շաբաթ, 14 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 03:27

Իմ սիրելի աղջիկ, անկախ նրանից, թե որքան դժվար է քո ֆիզիկական տառապանքը, դու պետք է հասկանաս, մինչ այն շարունակում է ուժգնանալ, որ այն այնպես է, ինչպես Ես եմ զգում:
Քո տառապանքը արտացոլում է Իմ սեփական տառապանքի մի մասնիկը միայն:
Ինձ հետ միության մեջ դու կիմանաս այն տառապանքը, որը Ես կրում եմ մարդկության մեղքերի պատճառով հոգու յուրաքանչյուր ցավի և ներքին խավարի համար:
Շատերը սխալմամբ հավատում են, որ Իմ տառապանքը սկսվեց և ավարտվեց Խաչի վրա:
Իմ տառապանքը չի ավարտվի մինչև Աստծո բոլոր զավակները չմիավորվեն սիրով և ներդաշնակությամբ, ուր մեղք գոյություն չի ունենա Իմ Հոր Նոր Դրախտի մեջ:

Անկախ նրանից, թե որքան շատ է մարդկությանն ասվել Իմ գոյության մասին, Ինձ դեռևս ատում են:
Հավատացողների շրջանում, չնայած Ինձ ընդունում են, Իմ ուսուցումները թույլ են տրվում միայն իրենց սեփական պայմանների վրա հիմնված:
Շատերը սիրով և բարությամբ կվերաբերվեն ուրիշներին, բայց միայն եթե նրանք, ում իրենք առաջարկում են այդ ընծան, ընդունեն իրենց սեփական գաղափարախոսությունները:
Օրինակ, շատերը կարհամարհեն մեղավորներին այն դեպքում, երբ պետք է բարություն ցույց տան և աղոթեն նրանց համար: Դրա փոխարեն նրանք պետք է առաջնորդեն օրինակով:
Ոմանք վիարվորանք կհեղեն ուրիշների վրա փոխանակ ցույց տալու այն սերը, որն ակնկալվում է նրանցից որպես քրիստոնյաներ:
Երբեք մի արհամարհեք ուրիշներին նույնիսկ այն դեպքում, երբ համաձայն չեք նրանց հետ, քանի որ դա ձեր իրավունքը չէ: Ոչ մեկը, միայն Աստված, իրավասություն ունի դատել մյուսին:
Մինչ շատ հավատացողներ շարունակում են պատվել Ինձ, դա կլինի իրենց սեփական պայմաններով:
Ոմանք կարիք կզգան իրենց առանձնացնել իրենց քույրերից ու եղբայրներից՝ ցույց տալու համար, թե որքան ուսյալ են իրենք հոգևոր հարցերում: Հետո նրանք կօգտագործեն իրենց սեփական մեկնաբանությունները, թե Իմ Գթասրտությունն իսկապես ինչ է նշանակում:
Քանի՞ անգամ եք լսել, որ Աստված ամեագթառատն է: Նա այնքան գթառատ է, որ քանի որ սիրում է բոլորին, ապա երբեք չի՞ արհամարհի նրանց:
Որ Նա երբեք ոչ մի հոգու չի՞ ուղարկի դժոխք:
Դա սուտ է: Այնքան շատ ստեր, ուր կմերժվի դժոխքի գոյությունը, կլինեն քրիստոնյաների անկման պատճառ:
Մարդիկ իրենք իրենց դատապարտում են դժոխքի: Ես չեմ դնում նրանց այնտեղ: Նրանք ընտրում են այն /դժոխքը/ քանի որ մերժում են իրենց մեջքը շրջել մահացու մեղքին:
Ոչ էլ նրանք թողություն են փնտրում կամ զղջում: Սա վտանգավոր մտածողություն է, և բոլոր քրիստոնյաների պարտականությունն է ուրիշներին ասել դժոխքի վտանգների մասին:
Այնքան շատերն են խոսում այնպես, ասես մեղքն այլևս կարևորություն չունի, ներառյալ նրանք, ովքեր մերժում են իրենց երեխաներին Մկրտության խորհուրդը: Նրանք հավատացած են, թե բոլոր մեղքը <<կներվի>>: Դա ճիշտ չէ:
Ամբողջ մեղքը <<կարող է>> ներվել, անկախ նրանից թե որքան սև է մեղքը, բայց միայն այն դեպքում, երբ մեղավորը ներում է փնտրում:
ՀԻմա Ես խոսում եմ ձեզ հետ Երկնքից՝ նախապատրաստելու համար Աստծո բոլոր զավակներին Իմ Երկրորդ Գալուսին, և ի՞նչ եմ Ես գտնում:
Ես ձեզ հետ խոսում եմ բանտի պատերի ետևից և մի վանդալի միջից, ուր դուք գցել եք Ինձ, որովհետև մերժում եք հավատալ, թե Ես կարող եմ խոսել ձեզ հետ այս ձևով:
Ոհ, որքան եք դուք վիրավորում Ինձ:
Նրանց, ովքեր անց են կացրել իրենց կյանքը Ինձ նվիրված լինելով և ովքեր գիտակ են Իմ Սուրբ Գրվածքներին, բայց հիմա մերժում են Ինձ, նրանց Ես ասում եմ հետևյալը. Հիմա ձեր կողմից Ինձ մերժումը կթողնի ձեզ չարչարաքնի և մեծ մշտի մեջ, երբ ճշմարտությունը բացահայտվի ձեզ:

Որովհետև այդ ժամանակ դուք կհասկանաք որ մի կողմ եք նետել այն հոգիներին, երբ Ես ձեր կարիքն ունեի նրանց փրկելու համար:
Ինչպես եք դուք Ինձ ստիպում խորտակված սրտով արտասվել ձեր կուրության վրա, որը ձեր խոնարհության բացակայության պատճառով է առաջացել:
Դուք կասկածում եք Իմ Սուրբ Խոսքին, երբ պետք է գրկեք այն, բռնեք այն, որովհետև խորտակվող հոգի եք և չունեք սրտի մեծահոգություն:
Ես աղերսում եմ ձեզ պատասխանել Իմ կանչին:
Ձեր սիրող Հիսուս
Մարդկության Ազատարար

Իմ մնացորդ եկեղեցին, Երկու Վկաները՝ Հայտնության Գրքում նշված

Չորեքշաբթի, 18 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 01:36

Իմ սիրելի աղջիկ, Ես հասկանում եմ, որ այս պատգամներից որոշները քեզ համար իմաստ չեն արտահայտում, բայց դու պետք է վստահես Ինձ և իմանաս, որ **Ես պետք է բացահայտեմ Հայտնության Գրքի բովանդակությունը, որպեսզի հոգիներն իմանան, թե ինչ սպսեն այս ժամանակներում:**
Նրանց, ովքեր քիչ հավատ ունեն սակայն ընդունում են Իմ Խոսքը՝ տրված ձեզ այս մարգարեի միջոցով, իմացեք, որ Իմ հանդեպ մաքուր սիրուց ծնված ձեր խոնարհությունն ու ցանկությունը ձեզ ավելի է մոտեցրել Իմ Սուրբ Սրտին:
Դուք Իմ Մնացորդ Եկեղեցին եք: Դուք այն Եկեղեցին եք, որի մասին նշված է Հայտնության Գրքում:
Դուք այն կնոջ ատաղրանքն եք, ով ծնեց մի արու զավակ և ով դուրս նետվեց անապատ, ուր դուք կմեկուսացվեք, սակայն միացած կլինեք որպես մեկ, որպեսզի հռչակեք Իմ Սուրբ Խոսքը և քարոզեք ճշմարիտ Ավետարանները:
Կինը ծնեց Իմ ճշմարիտ Եկեղեցին՝ Իմ հավատարիմ հոտը, ով սխալ չի առաջնորդվի Կեղծ Մարգարեի կողմից:
Դուք, Իմ Եկեղեցի, դուրս նետված կլինեք անապատ 1,200 օր, ուր ապաստան կգտնեք:
Բայց Սուրբ Հոգու ընծայով դուք կսնվեք Իմ սիրո պտուղներով:
Իմ քրիստոնեական եկեղեցիների հավատարիմ անդամներն են, ներառյալ Իմ սրբազան սպասավորները և Իմ այն հետևորդները, ովքեր կմերժեն Կեղծ Մարգարեին, որ պետք է միասնական պահեն Իմ Եկեղեցին:
Դուք ստիպված կլինեք գաղտնի պատվել Ինձ, որվհետև Կեղծ Մարգարեի ղեկավարման ընթացքում պատարագը անճանաչելիորեն կփոխվի:
Դուք Իմ ճշմարիտ հետևորդներն եք և Երկնքի բոլոր շնորհները հեղվում են ձեր թանկագին հոգիների վրա:
Որքան եմ Ես սիրում ձեզ, զավակներս, և որքան եք դուք թեթևացնում Իմ տառապանքները: Բայց որքան շատ ցավ կա Իմ սրտում Իմ այն հետևորդների պատճառով, ովքեր կմերժեն լսել Ինձ:
Նրանք Կեղծ Մարգարեի կողմից կներքաշվեն սարդոստայնի մեջ, և Ես չեմ կարողանա փրկել նրանց:
Իրենց սեփական կամքով նրանք ապտակ կհասցնեն Իմ դեմքին:

Իմ Մնացորդ Եկեղեցին պետք է տարածի խոսքը Իմ մյուս զավակներին, ներառյալ նրանց, ովքեր ընդհանրապես Ինձ չեն ճանաչում:
Դուք, Իմ Մնացորդ Եկեղեցի, պետք է հռչակեք Իմ մարգարեություններն ու Իմ Սուրբ Խոսքը նրանց, ովքեր քրիստոնյա չեն և չգիտեն Տասը Պատվիրանները:
Ձեր աշխատանքը պետք է լինի ապահովել, որպեսզի Սուրբ Աստվածաշունչը կարդացվի և հասկացվի:
Դուք եք տեղեկացնելու աշխարհին Հայտնության Գրքում նշված կնիքների ամբողջական իմաստը, որը Ես կբացահայտեմ Մարիա Աստվածային Գթասրտությանը:

Հայտնության Գրքի Երկու Վկաները.

Դուք, ծաղիկներս, Հայտնության Գրքում նշված Երկու Վկաներից մեկն եք, ովքեր կպաշտպանվեն Երկնքից:
Ձեզ տրվող Իմ Խոսքը, Իմ Մնացորդ Եկեղեցի, մի կողմ կնետվի դիակի պես, բայց Իմ Խոսքը երբեք չի մեռնի:
Հրեաները կլինեն Երկու Վկաներից երկրորդը:
Երկու Ճրագները Իմ քրիստոնեական եկեղեցիներն են՝ ավանդական ճշմարիտ եկեղեցին և Իմ այն հետևորդները, ովքեր մի կողմ կնետվեն Կեղծ Մարգարեի կողմից:
Երկու Ձիթենիները Հին Երուսաղեմ Իսրայելն ու Նոր Իսրայել են:
Նրանք, հրեաները, վերջապես կիմանան որ Ես Մեսիան եմ, և ճշմարտության նրանց քարոզումը նույնպես մի կողմ կնետվի և դուրս կշպրտվի Կեղծ Մարգարեի և Հակաքրիստոսի կողմից, որ դիակի պես փտի: Դարձյալ, այս ընտրյալ ռասան չի մեռնի:
Երկուսն էլ պարտված կզգան, բայց դա այդպես չի լինի, քանի որ դուք մյուս կրոնների հետ միասին կկազմավորեք միակ ճշմարիտ Եկեղեցին՝ Նոր Երուսաղեմը, որը կբարձրանա Մոխիրներից:
Դուք կդիմանաք այն սարսափելի չար միապետությանը, որը կբարձրացվի Կեղծ Մարգարեի և Հակաքրիստոսի երկակի առաջնորդության ներքո, որոնք երկուսն էլ կզցվեն կրակի լճի մեջ, որ դժոխքն է:
Այս հալածանքը երկար չի տևի, և ձեզ կտրվի մեծ զորություն և պաշտպանություն:
Օգնություն կտրվի ձեզ, և ձեր միջից շատ առաջնորդներ կբարձրանան՝ ձեզ այդ էտապի միջով առաջնորդելու համար:
Ձեզնից շատերը կդառնան սրբեր Իմ Նոր Դրախտի մեջ և, օգնած լինելով երկրի վրա Իմ Մնացորդ Եկեղեցին կառուցելու մեջ, կթագավորեն Ինձ հետ Նոր Երկնքի և Երկրի մեջ, որը կհայտնվեն Իմ Երկրորդ Գալուստին:
Նրանց, ովքեր Ինձ հետ չեն, շատ կարճ ժամանակ կտրվի ընտրելու համար:
Դուք կամ կլինեք Կեղծ Մարգարեի կողմից և Իմ դեմ, կամ կլինեք Իմ կողմից:
Ընտրեք առաջինը, և խաբեբան կգողանա ձեր հոգին: Սա կոպիտ է հնչում, բայց ճշմարտությունն է:
Նախազգուշացման ընթացքում Աստծո բոլոր զավակներին կտրվի Իմ ներկայության ապացույցը:
Աղոթեք, որ այդ ժամանակ ընդունեք ճշմարտությունը, որ այդ Ես եմ՝ ձեր սիրող Հիսուս Քրիստոսը, ով Երկնքից կանչում է ձեզ որ բացեք ձեր աչքերը տեսնելու համար, և որ լսեք՝ իմանալու համար նախքան չափազանց ուշ կլինի:
Ձեր սիրող Հիսուս:

Ես՝ ձեր սիրող Հիսուսը, երբեք չեմ քայքայի Իմ Սեփական Եկեղեցին

Երկուշաբթի, 16 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 06:00
Իմ սիրելի աղջիկ, Ես կանչում եմ Աստծո բոլոր զավակներին և վստահեցնում ձեզ, որ Ես՝ ձեր սիրող Հիսուսը, **երբեք չեմ քայքայի Իմ սեփական Եկեղեցին:**
Այնուամենայնիվ Ես ետ չեմ կանգնի և նայի, թե ինչպես է հատկապես մի հերձված խումբ, որը ոչ մի բան անելու իրավունք չունի Մայր Աթոռում, մասնատում Իմ Եկեղեցին:
Քանի որ դա հենց այն է, ինչը Կեղծ Մարգարեն և Սատանային կռապաշտող ինքնակոչները փորձում են անել: **Նրանք ցանկանում են գլխիվայր շրջել Կաթոլիկ Եկեղեցին և բաժանել այն մանր մասերի:**
Ահա թե ինչպես , զավակներս, Սատանան կկանգնի Աստծո՝ ամեն բանի արարչի դեմ վերջնական ըմբոստության մեջ:
Իմ Եկեղեցին ոչնչացնելու այդ չար պլանը գաղտնի գոյություն ունի արդեն 100 տարի, բայց 1967թ-ից ի վեր այն ուժգնացել է:
Չար սեկտի անդամ շատ ինքնակոչներ, ովքեր պաշտում են Սատանային, **մտել են հոգևոր ճեմարաններ, որպեսզի տեղ գրավեն Վատիկանում:**
Նրանց զորությունը, չնայած թույլատրվում էր Հայր Աստծո կողմից, մինչ այժմ սահմանափակ էր: Քանի որ ժամանակների վերջը մոտենում է, այն կփոխվի:
Այս չար աղանդը հիմա կսանձազերծի ամեն մի իշխանություն, վստահանալու համար, որ ընտրեն նոր փոխարինորդ **Իմ Սուրբ Երեց Բենեդիկտ XVI Պապի փոխարեն:**
Բոլոր նրանք, ովքեր ծանոթ են Իմ ուսուցումներին, հիմա փոփոխություններ կտեսնեն Սուրբ Պատարագն ասելու մեջ:
Նոր աշխարհիկ օրենքներ կներմուծվեն, որոնք կհակադրվեն Խաչի վրա Իմ մահվանը: Իմ շատ նվիրված հետևորդներ կտեսնեն սա և կվիրավորվեն: Նրանց տեսակետներին ուշադրություն չի դարձվի, և շատ խորհուրդներ այլևս չեն առաջարկվի:
Ահա թե ինչու շատ նախապատության կարիք կա:
Այն կաթոլիկները, եվքեր կվիրավորվեն կամ կվհատվեն, խնդրում եմ, հիշեք որ Ես այստեղ եմ:
Կանչեք Ինձ՝ ձեր սիրող Հիսուսին, և իմացեք, որ չպետք է վախենաք Իմ ուսուցումների ճշմարտությունը հռչակելուց:
Դուք չպետք է վախենաք մեջք շրջել հերետիկոսությանը:
Ես ուղղություն ցույց կտամ և կպաշտպանեմ ձեզ ձեր ճամփորդության ընթացքում, և դուք կառաջնորդվեք Սուրբ Հոգու զորությամբ:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Իմ պատգամները բոլոր կրոնների և հավատամքների համար են, ներառյալ նրանց, ովքեր չեն հավատում

Երեքշաբթի, 17 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 06:30

Իմ սիրելի աղջիկ, իմացիր որ քեզ տրվող Իմ պատգամները ողջ աշխարհի համար են: Դրանք տրվում են բոլոր կրոններին և դավանանքներին, ներառյալ նրանց, ովքեր չեն հավատում Աստծուն՝ Հավիտենական Հորը, ողջ աշխարհի Արարչին:
Զավակներս, դուք պետք է իմանաք, որ քանի որ ձեզ տրվել է Եռանձն Աստծո՝ Սուրբ Երրորդության ճշմարտությունը, որ բաղկացած է Հորից, Որդուց և Սուրբ Հոգուց, դուք պարտականություն ունեք ողջ աշխարհին հռչակելու Իմ Սուրբ Անունը:
Անկախ նրանից հավատում եք թե ոչ, որ Ես խոսում եմ ձեզ հետ այս պատգամների միջոցով, դուք պետք է օգնեք այն խեղճ հոգիներին, որոնք Իմ պաշտպանության կարիքն ունեն, որպեսզի նրանք կարողանան փրկվել:
Շատերն են հարցնում, թե ինչու են այս պատգամները այդքան շատ խոսում Սատանայի մասին: Իմ պատասխանը սա է. Սատնան և նրա ընկած հրեշտակները թափառում են երկրի վրա՝ աշխատելով մտնել մարդկային արարածների մեջ:
Նրանք գրոհում են մարդկանց վրա զգայարանների միջոցով՝ հիմնականում խրախուսելով նրանց գործել մարմնի մեղքեր:
Նրանք մտքեր են դնում մարդկանց ուղեղների մեջ, որպեսզի նրանք գործեն վայրագություններ, որոնք վիրավորում են Իմ Հորը:
Արդեն մեղքի մեջ գտնվող հոգիների դեպքում նրանք կարող են տիրանալ մարմնին: Երբ սա տեղի է ունենում, այդ խեղճ բռնված հոգիները ավերում են առաջացնում իրենց շուրջբոլորը:
Եթե նրանք իշխանության դիրքերում են, ապա կարող են սարսափելի անարդարություն հանդես բերել նրանց հանդեպ, ում ղեկավարում են:
Նրանք կներմուծեն օրենքներ, որոնք չեն հնազանդվի Հայր Աստծո կողմից դրված Տասը Պատվիրաններին:
Այլ դեպքերում նրանք մեծ տառապանք կառաջացնեն մարդկանց կյանքում:
Բացասականությունը առաջացնում են Սատանան և նրա սև հրեշտակները: Այն Աստծուց չէ:
Աստծուծ կարող է գալ միայն խաղաղություն և սեր:
Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ազատվել իրենց կյանքում բացասական մտքերից և զգացմունքներից, նրանց անհրաժեշտ է միայն Իմ՝ իրենց սիրող Հիսուս Քրիստոսի հանդեպ պաշտամունքը:
Աղոթքը, պարզ զրույցը բավական են: Ձեր սեփական խոսքերով խնդրեք Ինձ օգնել ձեզ:
Եթե դա ասվի սրտանց, Ես անմիջապես կպատասխանեմ և կօգնեմ ձեզ ավելի մոտենալ Իմ Սուրբ Սրտին:
Խնդրում եմ, զավակներս, թույլ տվեք Ինձ ձեզ մոտիկ մնալ և տալ ձեզ այն հանգստությունը, որին դուք ձգտում եք դժբախտությամբ, անարդարությամբ, դաժանությամբ և ատելությամբ լի աշխարհում:
Ես ձեր փրկապարանն եմ: Միայն Ես կարող եմ օգնել: Խնդրում եմ կանչեք Ինձ
խաչակրաց արշավանքի այս աղոթքի մեջ (45)

Ո՜հ Հիսուս, ես շատ քիչ գիտեմ Քո մասին
Բայց խնդրում եմ օգնիր ինձ բացել սիրտս թույլ տալու համար Քեզ գալ իմ հոգու մեջ, որպեսզի կարողանաս բուժել ինձ, սփոփել ինձ և լցնել ինձ Քո խաղաղությամբ:

Օգնիր ինձ ուրախություն զգալ, հաղթել բոլոր բացասական մտքերը, և սովորել հասկանալու թե ինչպես Քեզ հաճելի լինել, որպեսզի կարողանամ մտնել Քո Նոր Դրախտը, ուր կարող եմ ապրել սիրո, ուրախության և հրաշքի կյանքով Քեզ հետ հավիտյան: Ամեն:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, զավակներս, անկախ նրանից, թե ինչ դավանանքի եք պատկանում, անկախ նրանից, թե որքան եք մեղանչել, վիրավորել կամ վնաս պատճառել ուրիշներին:
Միայն Ես կարող եմ փոխել ձեր ապրելու ձևը:
Միակ ճանապարհը ինքներդ ձեզ ձեր վարած դժվարին կյանքից ազատելու համար, Ինձ կանչելն է, որպեսզի Ես կարողանամ օգնել ձեզ:
Ձեր սիրող Հիսուս

Երբեք անարդարացի ձևով առավելության մի հասեք այլոց նկատմամբ նույնիսկ բիզնեսում, քաղաքականության կամ կյանքի այլ ոլորտում:

Հինգշաբթի, 19 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ, որ դու ասես Իմ բոլոր հետևորդներին, որ նրանց աղոթքները լսվում են, և որ դրա հետևանքով շատ չար իրադարձություններ են մեղմացվում:
Ես ցանկանում եմ նաև որ հայտնի լինի, որ քո տառապանքի արդյունքում, աղջիկս, Ես կարողացել եմ փրկել չորս միլիոն հոգի:
Իմ Գթասրտությունը հեղվել է Աստծո այդ զավակների վրա, ովքեր դեռևս կենդանի են աշխարհում այսօր:
Իմ մյուս հետևորդների կողմից առաջարկված այլ զոհաբերությունները, աղոթքի և պահեցողության միջոցով, օգնում են Ինձ փրկել մարդկանց սարսափելի ճակատագրից:
Ձեր զորությունը, սերը և տոկունությունը նշանակում են, որ Սատանայի ուժը թուլանում է:
Դա նաև նշանակում է, որ Մեկ Համաշխարհային Կարգի ուժը թուլանում է:
Դուք պետք է իմանաք, որ աղոթքը թուլացնում է չարն աշխարհում:
Որքան շատ է աղոթքը, այնքան քիչ է Սատանայի ուժը:
Երբեք չթերագնահատեք նույնիսկ մեկ մարդու աղոթքն ու տառապանքը, քանի որ այն թեթևացնում է պատիժը նրանց համար, ովքեր առանց դրա կկանգնեին դժոխքի կրակների առջև:
Սերը որ դուք զգում եք զավակներս, տրված ձեզ ձեր ծծնդյան պահից, մաքուր է:
Հազվադեպ է ատելությունը մտնում ձեր կյանքի մեջ նախքան կհասնեք բանական տարիքի:
Այդ տարիքից փոքր երեխաներն անմեղ են, մաքուր և խոնարհ Իմ Աչքում և տեսնում են իրերy պարզ, չբարդացված ձևով: Սա է այն ճշմարիտ սերը, որը դուք պետք է փորձեք վերագտնել ձեր կյանքում:

Երբ կյանքին նայում եք պարզ կերպով, պատվում եք Աստծուն՝ Հորը, ամեն բանի Արարչին և ենթարկվում Նրա Պատվիրաններին, այդ դեպքում դուք նորից դառնում եք ինչպես երեխա:
Դուք դառնում եք մաքուր, սիրող և պարզ, և սրտով հասարակ ու չարությունից զուրկ: Այդ դեպքում ձեզ կտրվի Սուրբ Հոգու զորությունը, որպեսզի ձեր հավատը անսասան լինի:
Դուք կդառնաք ինչպես երեխա, բայց ձեզ կտրվի մարտիկի՝ Աստծո բանակի ճշմարիտ և պատվավոր անդամի զենքն ու զրահը:
Իր ժամանակին դուք կթագավորեք Ինձ հետ կողք կողքի Նոր Դրախտում:
Պարզ մնացեք ուրիշների հանդեպ ձեր սիրո մեջ: Երբեք պայմանով սեր մի առաջարկեք, որն ինչ-որ բան է առաջարկում փոխարենը:
Դրա փոխարեն առաջարկեք սեր առանց դրան կցված պայմանների: Առաջարկեք սերն այլոց հանդեպ որպես Աստծուն տրվող ընծա:
Յուրաքանչյուր մարդու, ում հանդիպում եք ձեր կյանքում, տեսեք Աստծո աչքերով: Յուրաքանչյուր մարդ ստեղծվել է Աստծո կողմից: Յուրաքանչյուրն աշխարհ է բերվել Աստծո սիրո միջոցով:
Նույնիսկ չնայած նրան, որ որոշ հոգիներ ծնվել են դաժան խաչով կրելու համար, նրանք սիրով են ներկայացվում աշխարհին Աստծո կողմից:
Սիրեք միմյանց, անկախ ձեր ունեցած թերությունների, ի պատիվ Իմ Հոր:
Ձննեք յուրաքանչյուր դեմք և նայեք դրան այնպես, ասես տեսնում եք այդ մարդուն Աստծո աչքերով:
Միայն այդ դեպքեւմ ձեզ համար հեշտ կլինի զերծ մնալ այլոց դատելուց:
Փորձեք յուրաքանչյուրի մեջ գտնել լավագույնն ու լավը: Սեր և բարություն ցույց տվեք միմյանց հանդեպ:
Երբեք անարդարացի ձևով մի հասեք առավելության այլոց նկատմամբ, նույնիսկ բիզնեսում, քաղաքականության կամ կյանքի այլ բնագավառում:
Երբ հանդիպում եք չարի, որ կա ուրիշների մեջ, սրտանց աղոթեք նրանց հոգու համար և զոհողության մի փոքր նվեր առաջարկեք Ինձ՝ ձեր Հիսուսին նրանց մեղքերի քավության համար:
Մի փոքր տառապանքը, այլոց հոգիների համար փոքր զոհողություններ կատարելը և աղոթքը կարող են մեղմացնել գալիք կանխասացված մարգարեության ուժգնությունը:
Երբ դա անում եք, Հոր Գթասրտությունը կարողանում է թափվել աշխարհի վրա շնորհների տարափի մեջ:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ ձեր աղոթքներն օգնեն նախապատրաստել մարդկությանը, համապատասխան ձևով, նախքան Նախազգուշացումը տեղի կուննա, որպեսզի քչերը կորչեն նախքան նրանց հնարավություն տրվի տեսնելու նրանց տրվող Իմ ընծան, սիրո, գթասրտության և հաշտության Իմ մեծ ընծան:
Ձեր սիրող Հիսուս
Մարդկության Փրկիչ

Նույնիսկ նրանք, ովքեր սարսափելի մեղք են գործում, սիրված են Հայր Աստծո կողմից

Ուրբաթ, 20 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 03:45

Իմ սիրելի աղջիկ, Իմ զավակներին պետք է ասել այն ուժգին սիրո մասին, որը Ես ունեմ Իմ Սուրբ Սրտի մեջ այս երկրի վրա ծնված յուրաքանչյուր զավակի համար:
Նույնիսկ նրանք, ովքեր սարսափելի մեղք են գործում, սիրված են Հայր Աստծո կողմից:
Ձեզնից յուրաքանչյուրն Աստծո զավակ է:
Դրա պատճառով Սատանան և նրա դևերը չարչարում են, տանջում և վիրավորում ձեզ:
Կարծրացած մեղավորները՝ Սատանայի բանակի անդամները, ովքեր գիտեն, որ Աստված գոյություն ունի, բայց ընտրում են կռապաշտել գազանին, պետք է իմանան հետևյալը:
Անկախ նրանից, թե դուք որքան շատ եք պատվում Սատանային, հիշեք, որ նա ձեզ չի սիրում:
Նա ատում է ձեզ և կոչնչացնի ձեզ:
Երկրի վրա և նրանից այն կողմ դրախտ առաջարկելու Սատանայի խոստումները դատարկ ստեր են:
Շատ շուտով ձեզ կտրվի ձեր հանդեպ ունեցած Իմ սիրո ապացույցը: Ձեր սրտում կասկած չի լինի՝ որ Ես՝ ձեր սիրող Հիսուսը, ցանկանում եմ գրկել ձեզ, ներել ձեզ և ձեզ բերել հավիտենական խաղաղություն, սեր, ուրախություն և երջանկություն Իմ Թագավորության մեջ՝Նոր Դրախտում:
Երբեք մի վախեցեք ձեր մեջքը շրջել այն կյանքի հանդեպ որ վարում եք, ուր կռապաշտում եք Սատանայի կողմից ձեզ առաջարկվող հարտության, սեքսի և բոլոր այլ նյութական հարմարավետությունների ընկալվող ընծաները, ում թագավորությունն այս երկրի վրա շուտով կավարտվի:
Միայն Ես՝ ձեր սիրող Հիսուսը, կարող եմ փրկել ձեզ:
Իմ գթասրտությունն այնքան մեծ է, որ Ես կներեմ ձեզ ամեն ինչ, երբ դուք զղջաք:
Շտապեք, եկեք Ինձ մոտ հիմա:
Մի կորցրեք ոչ մի վայրկյան, քանի որ ձեր ապագա երջանկությունը վտանգի տակ է:
Ես խոստանում եմ ձեզ հավիտենական կյանք, ուրախություն և մի գեղեցիկ Դրախտ, ուր սիրված կլինեք, փայփայված և ոչ մի բանի կարիք չեք ունենա:
Եթե դուք հիմա չեք կարող ընդունել Իմ Գթասրտության Ձեռքը, ապա երբ ժամանակը գա վերջին օրը, ձեզ մեկ անգամ ևս հնարավորություն կտրվի Ինձնից Գթասրտություն խնդրել:
Երբ այդ օրը գա, դուք, ձեզնից շատերը, կհասկանաք թե ինչ սխալ եք թույլ տվել:
Սակայն Ես կգրկեմ ձեզ ինչպես Աստծո վաղուց կորած և շատ սիրված զավակի, անկախ նրանից, թե որքան շատ եք տառապել չարի ձեռքին:
Դուք միայն պետք է կանչեք Ինձ և Գթասրտություն խնդրեք:
Եթե հիմա ներգրավված եք խաբեության և չարի սարդոստայնի մեջ, որից չեք կարող խուսափել, ապա Ես խնդրում եմ ձեզ կանչել Ինձ՝ ասելով հետևյալը.
Խաչակրաց արշավանքի աղոթք (46). **Ազատիր ինձ Սատանայի շղթաներից**

Ո՜հ Հիսուս, ես կորած եմ
Ես շփոթված եմ և բանտարկյալի պես եմ ինձ զգում
Ով ընկել է մի ցանցի մեջ, որից չի կարող ազատվել
Ես վստահում եմ Քեզ Հիսուս, որ կգաս ինձ օգնության
Եվ կազատես ինձ սատանայի ու նրա չարքերի շղթաներից:

Օգնիր ինձ, քանի որ ես կորած եմ
Ես Քո սիրո կարիքն ունեմ, որ ինձ ուժ տա
Հավատալու Քեզ և վստահելու Քեզ
Որպեսզի կարողանամ փրկվել այս չարիքից
և ինձ ցույց տրվի լույսը, որ կարողանամ գտնել խաղաղություն, սեր և երջանկություն վերջապես:
ԱՄԵՆ.

Միլիարդավոր հոգիներ, ոչ թե միլիոնավոր, դարձի կգան

Շաբաթ, 21 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 04:00

Իմ սիրելի աղջիկ, Ես պետք է սփոփանք բերեմ բոլոր նրանց, ովքեր կվախենան այս պատգամներից:
Թույլ տվեք Ինձ հանդարտեցնել ձեզ բոլորիդ, Իմ սիրելի հետևորդներ, վստահեցնելով ձեզ ողջ մարդկության հանդեպ ունեցած Իմ Մեծ Գթասրտության մասին:
Իմ փայփայած հետևորդների աղոթքների պատճառով, որոնք բոլորն էլ լսվում են և դրանց պատասխան է տրվում ըստ Իմ Հավիտենական Հոր որոշած ժամանակի աստվածային ընտրության, արդեն շատ դարձ է սկսվել:
Երբեք չլքեք հույսը: Դուք երկրի վրա Իմ առաքելության ողնաշարն եք՝ օգնելու փրկել ողջ մարդկությանը: Որպես այդպիսին դուք կտառապեք ուրիշների մեղքերի ցավով:
Երբեք չենթադրեք, թե ուրիշների մեղքերը կարող են այն աստիճան սևացնել Ամենաբարձրյալ Աստծո լույսը, որ ամեն ինչ կորած լինի:
Շատ շուտով բոլորն ականատես կլինեն Աստծո Փառքին Իմ Աստվածային Գթասրտության միջոցով, որը կբացահայտվի Նախազգուշացման ընթացքում:
Միլիարդավոր հոգիներ, ոչ թե միլիոնավոր, դարձի կգան: Սա կնշանակի, որ Սատանայի ուժը կնվազի, երբ Աստծո բանակը բարձրանա զորությամբ՝ պարտության մատնելու համար գազանին:
Շուտով ողջ մարդկությունը կիմանա իր գոյության մասին ճշմարտությունը: Սա կլինի շրջադարձային կետը Աստծո զավակների համար, ովքեր կմիավորվեն նախապատրաստվելու համար Խաղաղության Նոր Դարաշրջանին, ուր մեղք գոյություն չի ունենա:
Աղոթքը կարևոր է, որովհետև Հայր Աստված այս երկրի վրա գտնվող յուրաքանչյուր անձի իր ծննդյան պահից տվել է ազատ կամքի ընծան: Սրա պատճառով, չնայած Նա /Աստված/ զորություն ունի անել ցանկացած բան որ կամենա, Նա ցանկանում է, որ Իր զավակներն Իր մոտ գնան իրենց սեփական ազատ կամքով:
Հայր Աստված չի ցանկանում ուժով ստիպել որ Իր զավակները սիրեն Իրեն:
Դա պետք է գա բնականորեն: Բայց ինչպե՞ս կարող եք սիրել մեկին, ում չեք ճանաչում:
Սա է խնդիրն այսօր աշխարհում: Շատ քչերն են ճանաչում Հայր Աստծուն: Շատ քչերն են ճանաչում Ինձ՝ Նրա սիրելի Որդի Հիսուս Քրիստոսին:
Դուք, Իմ հետևորդներ, պետք է օգտագործեք աղոթքը, որպեսզի Իմ Հայրը կարողանա յուրահատուկ ընծաներ տալ այն հոգիներին, ովքեր խավարի մեջ են:
Այդ դեպքում նրանց ցույց կտրվի Նրա Փառահեղ Լույսը և այդ հոգիները կփրկվեն:

Ձեր աղոթքի ընծայի միջոցով Հայր Աստված կօգտագործի աստվածային միջամտությունը, որպեսզի Իր սրտին մոտեցնի նրանց, ովքեր չեն ճանաչում Իրեն կամ չգիտեն որ Նա գոյություն ունի:
Այնուամենայնիվ, շատ հոգիներ, ովքեր ճանաչում են Իմ Հորը և դիտավորյալ կերպով իրենց մեջքն են շրջում, սարսափելի երկնային պատիժների առաջ կկանգնեն:
Նրանց կտրվի յուրաքանչյուր հնարավորություն, բայց նրանք կմերժեն Աստծուն:
Այն հոգիների համար, ովքեր կատարում են արհամարհելի գործողություններ, որոնք տարածված երևույթ են աշխարհի որոշ մասերում, **երկնային պատիժը կգա երկրաշարժների ձևով:**
Այն գլոբալ խմբերը, ովքեր կշարունակեն ոչնչացնել իրենց իշխանության տակ գտնվող երկրները, նրանք կկանգնեցվեն և խստորեն կպատժվեն Իմ Հոր ձեռքով:
Դարձյալ, ձեր աղոթքների կարիքը կա այդ մեղքերը և դրանց հետևանքով /իջնող/ պատիժները մեղմացնելու համար:
Մի փոքր ավելի ժամանակ է անհրաժեշտ Իմ Աստվածային Գթասրտության նախապատրաստման ընթացքում, թույլ տալու համար, որպեսզի ավելի շատ հոգիներ նախապատրաստված լինեն այդ մեծ իրադարձության համար:
Կարևոր է, որ մարդկության մեծ մասը կարողանա փրկվել և որ հոգիներին, ներառյալ կարծրացած մեղավորներին, հնարավորություն տրվի վերամիավորվել ոպես մեկ Աստծո հետ:
Իմ մեծագույն ցանկությունն է, որ Ես թագավորեմ մարդկության մեծ մասի վրա Նոր Դրախտում:
Ձեր աղոթքները կօգնեն Ինձ իրականացնելու Իմ մեծ ցանկությունը, այն, որ մենք բոլորս կարողանանք դառնալ մեկ ընտանիք սիրո և միասնության մեջ հավիտյանս հավիտենից:
Ձեր սիրող Հիսուս

Կույս Մարիամ. Երբ ժամանակները դժվար կամ ցավալի կթվան, զավակներս, միշտ կանչեք Ինձ

Կիրակի, 22 ապրիլի, 2012թ, առավոտյան ժ 10:00

Զավակս, Իմ Որդին այնքան երջանիկ է այն բանից, թե ինչպես է Իր սիրելի բանակը ենթարկվում Իր Սուրբ ցանկություններին **Իր Խաչակրաց Արշավանքի Աղոթքներն ասելով:**
Այդ աղոթքները ներկա ժամանակների համար են՝ օգնելու Աստծո բոլոր զավակներին փնտրելու այն պաշտպանությունը, որի կարիքը նրանք ունեն այնքան շատ հոգիների համար դժվարին այս ժամանակներում:
Երբ ժամանակները դժվար կամ ցավալի կթվան, զավակներս, միշտ կանչեք Ինձ՝ ձեր Սիրող Մորը, որ բարեխոսեմ Իմ Թանկագին Որդու մոտ ձեր անունից:
Միշտ հիշեք, որ Աստծուն առաջարկված ձեր անձնական զոհողություններն օգնում են փրկել այնքան շատ հոգիների երկրի վրա:
Ձեր աղոթքները միշտ լսվում են:
Դրանք երբեք չեն անտեսվում, բայց դրանց հետ գործ են ունենում Իմ Հոր Կամքին համապատասխան:

ՈՒստի դուք պետք է համբերատար լինեք, զավակներս: Միշտ ամբողջովին վստահեք Իմ Որդուն:
Հանձնեք Նրան ձեր բոլոր վախն ու տառապանքը, հետո պետք է վստահեք, որ Նա գործ կունենա ամեն ինչի հետ:
Այն հավատացողների համար, ովքեր դժվարանում են աղոթել կամ վառ պահել իրենց սերն Իմ Որդու հանդեպ, ահա մի յուրահատուկ **խաչակրաց արշավանքի աղոթք (47)** օգնելու համար վերավառել Հիսուսի հանդեպ ձեր սերը:

Խաչակրաց արշավանքի աղոթք (47) Վերավառել ձեր սերը Հիսուսի հանդեպ
Ոհ Օրհնյալ Մայր, Մայր Փրկության ողջ աշխարհի համար
Աղոթիր, որ Հիսուսի հանդեպ իմ սերը վերավառվի
Օգնիր ինձ զգալ Նրա սիրո բոցը, որպեսզի այն լցնի իմ հոգին:

Օգնիր ինձ սիրել Հիսուսին ավելի շատ
Աղոթիր, որ Նրա հանդեպ ունեցած իմ հավատը, սերը և նվիրվածությունը ավելի ուժեղ դառնա
Ամոքիր կասկածները, որ տանջում են ինձ, և օգնիր ինձ պարզորեն տեսնել
Ճշմարտության Աստվածային Լույսը, որը ճառագում է Քո Սիրելի Որդուց՝
Ողջ մարդկության Փրկչից: Ամեն:

Գնացեք խաղաղությամբ, զավակներս: Հիշեք, երբ դուք սրտանց խնդրեք Ինձ աղոթել ձեզ համար, Ես՝ Փրկության Մայրը, կներկայացնեմ ձեր խնդրանքը Իմ Սիրելի Որդուն:
Ես երբեք ոչ մի խնդրանք չեմ անտեսի, եթե այն համահունչ է Իմ Որդու ցանկություններին և Հոր Կամքին համաձայն է:
Սովորեք ավելի շատ վստահել, զավակներս: Երբ վստահում եք Իմ թանկագին Որդուն, դուք ցուցադրում եք Նրա հանդեպ ունեցած ձեր սերը:
Եթե ձեր սերը թույլ է, ապա Նրա հանդեպ ձեր ունեցած վստահությունը նույնպես թույլ կլինի:
Միայն ձեզնից նրանք, ովքեր իրենց կխոնարհեցնեն Իմ Որդու առջև, կօրհնվեն այն շնորհներով, որոնք տրվում են ձեր հավատն ուժեղացնելու համար:
Երբեք տեղի չտաք, երբ հուսահատություն եք զգում:
Հուսահատությունը ստեղծվում է Չարի կողմից:
Պարզապես շրջվեք դեպի Ինձ, և Ես կաղոթեմ ձեր հոգում խաղաղության համար:
Երբ դա անեք, կկարողանաք մերժել Չարի կողմից դրված գայթակղությունը և ազատ կդառնաք:
Ձեր Օրհնյալ Մայր
Հրեշտակների Թագուհի
Մայր Փրկության

Օգնեք Ինձ նախապատրաստել աշխարհին Իմ Երկրորդ Գալուստի համար

Կիրակի, 22 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, մարդկությունը պետք է իմանա, որ **ժամանակը, երբ Ես Ինքս Ինձ կներկայացնեմ չհավատացող աշխարհին, հեռու չէ:**
Աստծո բոլոր զավակները, ովքեր նվիրված հետևորդներ են, հիմա պետք է Իմ՝ իրենց սիրող Հիսուսի հանդեպ հավատարմությունից ելնելով, **օգնեն Ինձ՝ նախապատրաստելու աշխարհին Իմ Երկրորդ Գալուստի համար:**
Արդեն այնքան շատ ժամանակ է տրամադրվել դեպի Իմ Սուրբ Սիրտ հոգիներ գրավելու համար:
Սա կարևոր էր, քանի որ առանց այդ ժամանակի շատ քիչ հոգիներ կկարողանային մտնել Իմ Նոր Դրախտ:
Ես կոչ եմ անում բոլոր նրանց, հանուն Իմ Սուրբ Անվան, թույլ տալ Ինձ ուղղություն տալ ձեզ օգնելու համար որ հոչակեք Իմ ուսուցումների ճշմարտությունը աշխարհի յուրաքանչյուր անկյունում:
Քարոզեք Իմ պարզ ուսուցումներն առաջին հերթին:
Բոլոր նրանք, ովքեր ասում են, թե Իմ հետևորդներն են, նրանցից ակնկալվում է հարևանի հանդեպ սեր:
Խոսեք միայն Իմ Երկրորդ Գալուստի մասին:
Ով էլ որ ձեզ դատապարտի, հիշեցրեք, որ **Իմ խոստումը՝ նորից փառքով գալու վերաբերյալ, որպեսզի դատեմ կենդանիներին ու մեռածներին,** իրականանալու է այս սերնդի կյանքի ընթացքում:
Իմ Սուրբ Հոգին կհեղեղի նրանց հոգիները, ում դուք կհաղորդեք Իմ Սուրբ Խոսքը:
Բայց ակզբում դուք պետք է խնդրեք Ինձնից այս յուրահատուկ շնորհը: Նախքան Ես ձեզ կվավերացնեմ անելու այս ամենասուրբ աշխատանքը, Ես ձեզ կոչ եմ անում Ինձնից խնդրել հետևյալ շնորհը, ասելով **խաչակրաց արշավանքի հետևյալ աղոթքը (48) Աղոթք Քրիստոսի Երկրորդ Գալուստը հայտարարելու շնորհի համար.**

Ո՜հ իմ Հիսուս,
Տուր ինձ շնորհը, որ հոչակեմ Քո Սուրբ Խոսքը
Ողջ մարդկությանը, որպեսզի հոգիները կարողանան փրկվել
Հեղիր Քո Սուրբ Հոգին ինձ վրա՝ Քո խոնարհ ծառայի
Որպեսզի Քո Սուրբ Խոսքը լսվի և ընդունվի
Հատկապես այն հոգիների կողմից, ովքեր ամենից շատ Քո գթասրտության կարիքն ունեն
Օգնիր ինձ պատվել Քո Սուրբ Կամքը միշտ և երբեք չվիրավորել
Կամ չարհամարհել նրանց, ովքեր մերժում են Քո Գթասրտության ձեռքը; Ամեն

Գնացեք հիմա, Իմ բանակ, քանի որ ձեզ տրվել է այն սպառազինությունը, որի կարիքն ունեիք մարդկությանը դարձի բերելու համար:
Ձեր առաքելության ընթացքում ձեզ կծաղրեն, կվիրավորեն և դեմ կկանգնեն:
Իմացեք, որ երբ դա տեղի ունենա, այդ ժամանակ իսկապես կլինեք Աստծո զավակ:
Չվախենաք, քանի որ Ես ձեզ ուժ կտամ հաղթահարելու այդ արգելքները:
Ես կառաջնորդեմ ձեզ ողջ ճանապարհին: Գնացեք խաղաղությամբ և սիրով:
Ձեր սիրող Հիսուս

Ավելի շատ ազգեր են միանում իրար, և ավելի շատ Աստծո զավակներ կղեկավարվեն Մեկ Մարմնի կողմից:

Երկուշաբթի, 23 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 08:00
Իմ սիրելի աղջիկ, մոտեցել է ժամանակը այն փոփոխությունների, թե ինչպես ողջ աշխարհում Կառավարությունները կղեկավարեն իրենց երկրները:
Ավելի շատ ազգեր են միանում իրար, և ավելի շատ Աստծո զավակներ կղեկավարվեն Մեկ Մարմնի կողմից:
Ժամանակն է, որ աչքներդ լայն բացած պահեք և **լսեք օրենքներում կատարվող բոլոր փոփոխությունների մասին, որոնք ձեզ կաղքատացնեն:**
Դեմ կանգնեք այն օրենքներին, որոնք կվերահսկեն ձեր սննդի պաշարները:
Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, կպատժի այն չար խմբերին, եթե նրանք փորձեն սովի մատնել Իր զավակներին:
Սա, Իմ հետևորդներ, **երրորդ կնքիքի բացահայտման ժամանակն է:**
Չնայած այն որոշ ժամանակ չի բացվի, Ես ասում եմ ձեզ, դա նրա համար է, որ դուք կարողանաք նախապատրաստել ձեր սնունդը՝ աճեցնելով ձեր սեփականը և պահելով այնպիսի սնունդ, որը չի փչանում:
Ժամանակի ընթացքում ձեր սնունդը կսահմանափակվի, ներառյալ՝ խմելու ջուրը:
Այս խումբը, մինչ թուլանում է ձեր աղոթքների պատճառով, նպատակ ունի սովամահ անել և **թունավորել շատ անմեղ մարդկանց՝ փորձելով նվազեցնել աշխարհի բնակչությունը:**
Նրանք շատ կպայքարեն դրան հասնելու համար:
Մինչ նրանք շարունակում են սարսափ տարածել Աստծո զավակների վրա, Իմ Հավիտենական Հայրը կստեղծի էկոլոգիական պատիժներ և երկրի երեսից կսրբի միլիոնավոր այդպիսի չար մարդկանց:
Ձեր եղանակի ձևերը կշարունակեն փոխվել: Ժամանակի ընթացքում դա կազդի առևտուր անելու հնարավորության վրա, այնպես որ գլոբալ ուժերը կկանգնեցվեն իրենց չար պլաններն իրականացնելուց:
Այս ողջ ճգնաժամի ընթացքում դուք, Իմ բանակ, պետք է աղոթեք Հայր Աստծուն, որ պաշտպանի ձեզ այդ մարդկանցից և որպեսզի նրանք բացեն իրենց կարծրացած սրտերը Աստծո Գթասրտության ճշմարտության հանդեպ:
Ես ասում եմ ձեզ սա, որպեսզի կարողանաք նախապատրաստվել:
Այս իրադարձություններն անմիջապես տեղի չեն ունենա, և այդ պլանի մեծ մասը հնարավոր է կասեցնել և մեղմացնել ձեր աղոթքների ու զոհողությունների միջոցով:
Չարիքն Աստծուց չի գալիս: Այն ելնում է ագահությունից, սեփական անձի հանդեպ սիրուց և ուժի ու վերահսկման ծարավից: Այս բոլոր չարությունները սերում են Սատանայից և դրվում աշխարհի առաջնորդների առջև նրանց գայթակղեցնելու համար, որպեսզի նրանք կարողանան վնասել Աստծո զավակներին:
Թույլ մի տվեք որ Սատանայի ուժերը վերահսկեն ձեր երկրները:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ ուժ ունենաք դիմակայելու այն միջոցառումներին, որոնք պլանավորված են ձեզ աղքատ, կախյալ և նրանց գթասրտությունից կախված պահելու համար, ովքեր վերահսկում են ձեր երկրները: **Նրանք կառավարում են գլոբալ ուժերով, որոնք բաղկացած են Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից, Չինաստանից և Ռուսաստանից:**
Ես՝ ձեր Հիսուսը, կօգնեմ ձեզ խուսափել հալածանքից, բայց հիշեք, որ աղոթքը ձեր հիմնական զենքն է լինելու:
Աղոթքը կարող է կանգնեցնել այդ չար մարդկանց՝ ձեր ուտելու, խմելու, հագնվելու և քրիստոնեական եկեղեցիներ հաճախելու ձեր կարողության վրա իշխանություն ունենալուց:

Կռվեք Իմ անվամբ, և Ես կանգնած կլինեմ ձեր կողքին միշտ:
Ձեր սիրող Հիսուս
ազ

Իմ սրբազան սպասավորներին Ես կասեմ հետևյալը. Մի կատարեք ձեր նախնիների սխալը, ովքեր մերժեցին Ինձ, երբ Ես եկա առաջին անգամ

Երեքշաբթի, 24 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 07:45

Իմ սիրելի աղջիկ, իմացիր, որ երբ Ես աշխարհին եմ կտակում այնպիսի կարևոր առաջադրանք, ինչպիսին հիմա, շատ մարդիկ կփորձեն կասեցնել այն:
Նրանք կփորձեն հարձակվել քեզ վրա և նվաստացնել նրանց, ովքեր ճանաչում են Իմ ձայնը, մինչ Ես փորձում եմ ողջ աշխարհին տալ Իմ պատգամները:
Քո՝ ժամանակների վերջի մարգարեի միջոցով տրվող այս պատգամների հանդեպ ցուցաբերվող ատելության չափը կշարունակի ավելանալ:
Լսեք Ինձ հիմա դուք բոլորդ, ովքեր ասում եք թե ճանաչում եք Ինձ: Ես նախապատրաստում եմ մարդկությանն Իմ Երկրորդ Գալուստի համար:
Եթե դուք Ինձ, Իմ ուսուցումներին հավատում եք և ասում եք թե ճանաչում եք Ինձ, ուրեմն **իմացեք, որ Ես ուղարկում եմ Իմ ժամանակների վերջի մարգարեին այլ մարգարեների հետ՝ ձեզ արժանի դարձնելու, որ մտնեք Իմ Թագավորություն:**
Իմ սրբազան սպասավորներին Ես ասում եմ հետևյալը: **Մի կատարեք ձեր նախնիների սխալը, ովքեր մերժեցին Ինձ, երբ Ես եկա առաջին անգամ:**
Ուշ դարձրեք և լսեք Իմ կանչը, քանի որ Ես կարիք ունեմ, որ դուք օգնեք Ինձ նախապատրաստելու Իմ հոտի հոգիները, նախքան մեծ հրաշքը տեղի կունենա:
Մի՞թե կարծում եք, թե Ես չէի ուղարկի Իմ մարգարեներին, որ նախազգուշացնեն ձեզ: Մի՞թե կարծում եք, թե Ես պարզապես կազդարարեի Իմ վերադարձը՝ առանց ձեզ նախապատրաստելու, և թույլ տալով, որ հոգիներ ոչնչանան:
Դուք բոլորդ, ովքեր դատապարտում եք Իմ Երկրորդ Գալուստը և շարունակում հայտարարել, թե հասկանում եք մարդկությանը տրված Իմ խոստումը, ամոթ ձեզ:
Ձեր խոնարհության պակասը նշանակում է, որ դուք չեք կարող մաքրագործվել Սուրբ Հոգով:
Դուք պետք է կանչեք Ինձ զանազանության այդ ընծայի համար, կամ հեռանաք Ինձնից:
Դուք Ինձ ներքև եք գցել: Դուք Ինձ ստիպում եք հիասթափության արցունքներ թափել, քանի որ Իմ սպասավորներն եք, ում տրված է հոգիների փրկության պատասխանատվությունը, որը ձեր աշխատանքն է:
Հիմա, երբ Ես կանչում եմ ձեզ Երկնքից, Ես խնդրում եմ ձեզ պատասխանել Իմ կանչին:
Ես շատ ընտրյալ հոգիներ ունեմ, ովքեր աշխատում են Ինձ հետ՝ Ինձ մոտ բերելու այն հոգիներին, որոնց Ես ծարավի եմ:
Ձեր պարտականությունն է բարձրանալ ձեր թմիրից և պատասխանել Իմ կանչին:
Ձեզնից միայն նրանք, ովքեր ճշմարիտ սիրում են Ինձ, կճանաչեն Իմ ձայնը:

Ինչպես մանուկը կճանաչի սեփական մորը, դուք նույնպես, Իմ սիրելի սպասավորներ, պետք է կանչեք Ինձ ինչպես մանուկ, վստահանալու համար, որ այդ Ես եմ՝ ձեր սիրող Հիսուսը, ով ձեզ նշան է անում բռնել Իմ ձեռքը:
Ես կառաջնորդեմ ձեզ փշերի ջունգլիի միջով, որի վրայով դուք պետք է անցնեք՝ հասնելու համար Իմ Նոր Դրախտի դարպասներին:
Մի՞թե Ես ձեզ չեմ ասել, որ նորից գալու եմ: Դատելու համար կենդանիներին ու մեռածներին:
Դե Ես կգամ շուտով և Ես կարիք ունեմ ձեր օգնությանը, որ օգնեք Ինձ հավաքելու Աստծո բոլոր զավակներին որպես մեկ:
Հիմա շատ քչերն են ճանաչում Ինձ այն խաբեության քողի պատճառով, որն ընկել է ողջ աշխարհի վրա: Շատերը չեն հավատում Հայր Աստծուն:
Քչերն են ընդունում, որ Ես՝ Հիսուս Քրիստոսը, Նրա միակ Որդին, մեռա իրենց փրկելու համար: **Դրա փոխարեն նրանք կամենում են հավատալ և կռապաշտել կեղծ աստվածների, որոնք գոյություն չունեն:**
Ինչպես եմ Ես սգում սարսափելի տխրությամբ, երբ տեսնում եմ երիտասարդներին ծիծաղելիս, երբ Իմ անունն են տալիս և ծաղրում են նրանց, ովքեր հրապարակայնորեն ընդունում են որ Ես գոյություն ունեմ:
Ինչպես եմ Ես տառապում խաչելության ցավով, երբ տեսնում եմ թե նրանք, ովքեր իրենց քրիստոնյա են հայտարարում, ինչպես են ծաղրի ենթարկվելու վախից մերժում հրապարակայնորեն հռչակել Իմ ուսուցումները:
Աշխարհը խաբվել է ստերի թագավորի կողմից: Միայն Ես կարող եմ հիմա հույս բերել և փրկել Աստծո զավակներին այն սարսափելի դատապարտումից, որ պլանավորվում է գլոբալ ուժեղ խմբերի բանակի կողմից, ներառյալ նրանց, ովքեր գտնվում են **Կեղծ Մարգարեի և Հակաքրիստոսի վերահսկողության տակ,** որ սարսափ բերեն յուրաքանչյուր ազգի վրա:
Իմ վերջին ժամանակների մարգարե Մարիա Աստվածային Գթասրտությանը տրվող բոլոր նախազգուշացումներն իրականանալու են:
Քանի դեռ դա տեղի չի ունեցել, երբեք չմոռանաք, որ դուք հավատարիմ եք Ինձ՝ ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին:
Առանց Իմ սիրո և ուղղորդության ձեզ համար անհնար կլինի ղեկավարել այն նավը, որն Իմ Սուրբ Եկեղեցին է երկրի վրա:
Արթնացեք: Մի մերժեք Աստծո մարգարեներին:
Հիմա շատերն են հայտարարում, թե գալիս են Իմ անունից, ինչպես Գրվածքներն են խանխասացել, բայց չեն առաջարկում այն հոգևոր սնունդը, որը կարող է միայն Ինձնից գալ:
Հիմա շատերն են առաջ գալիս, որպեսզի ժամանակների վերջում այս պատգամներում պարունակվող աշխարհին տրվող Իմ հրապարակային ձայնը մերժվի:
Աղոթքը դեպի Իմ բազուկներ ետ բերող ձեր ուղին է:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք շնորհների համար, որ ձեր աչքերը բացվեն, որպեսզի կարողանաք ճանաչել Ինձ նախքան չափազանց ուշ կլինի:
Ես ձեր օգնության, ձեր սիրո և ձեր նվիրվածության կարիքն ունեմ:
ՀԻշեք, Իմ պատճառով էր, որ դուք տվեցիք ձեր սրբազան երդումները: Հիմա, երբ Ես կանչում եմ ձեզ, մի մերժեք Ինձ:
Գրկեք Ինձ և թույլ տվեք Ինձ ուղղություն տալ ձեզ, որպեսզի կարողանաք առաջնորդել Իմ մնացորդ եկեղեցին և փրկել հոգիներ:

Ես տալիս եմ ձեզ Իմ հատուկ օրհնությունը և սպասում, որ կպատասխանեք Իմ կանչին, որն այս հաջորդ **խաչակրաց արշավանքի աղոթքի (49)** մեջ է.
հավատարմության երդում քրիստոնյա հոգևորականների համար.

Ո՜հ Հիսուս ես Քո խոնարհ ծառան եմ
Ես տալիս եմ իմ հավատարմության և նվիրվածության երդումը Քեզ
Ես խնդրում եմ Քեզ տալ մի նշան Քո կանչի մասին
Օգնիր ինձ բացել աչքերս և տեսնել Քո խոստումը

Օրհնիր ինձ Սուրբ Հոգու շնորհով
Որ չխաբվեմ նրանց կողմից ովքեր հայտարարում են թե գալիս են Քո անունից, բայց չեն խոսում ճշմարտությունը
Ցույց տուր ինձ ճշմարտությունը

Թույլ տուր ինձ զգալ Քո սերը
Որ կարողանամ կատարել Քո Ամենասուրբ Կամքը
Ես խնդրում եմ Քեզ խոնարհ սրտով, որ ինձ ցույց տաս ճանապարհը
Թե ինչպես կարող եմ ես օգնել Քեզ փրկելու մարդկության հոգիները:
Ամեն:

Մի անտեսեք Իմ կանչը: Մի մերժեք Ինձ, երբ Ես գալիս եմ մեկ անգամ ևս:
Այս անգամ Ես գալիս եմ ոչ միայն մարդկությանը մեկ անգամ ևս փրկելու, այլև Իմ սիրելի Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո Աստվածային Կամքը իրականացնելու համար:
Գնացեք խաղաղությամբ
Ձեր սիրող Հիսուս

Ողջ մարդկությունը կունենա ազատ կամք, մինչև նրանց կամքը միավորվի Հոր Աստվածային Կամքին

Չորեքշաբթի, 25 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժամը 03:50

Իմ սիրելի աղջիկ, շատ հոգիներ չեն ընդունում Ինձ, պարզապես այն պատճառով որ չեն ցանկանում:
Նրանք գիտեն, թե Ես ով եմ:
Նրանք գիտեն, որ ստեղծվել են ոչնչից Հոր՝ Աստծո կողմից, չնայած դրան, նրանք ընտրում են անտեսել Աստծուն:
Նրանք անփութորեն օգտագործում են Իմ անունը շատ ու շատ անգամ, և Իմ անունն օգտագործվում է անեծքների մեջ, որոնք դուրս են թափում դիավային բռնվածություն ունեցողները:
Միայն այն ժամանակ, երբ մարդկանց հետ դժբախտություն է պատահում, այդ ժամանակ է, որ նրանք կանգ են առնում և մտածում մահվան ու իրենց հավատացմամբ առջևում սպասվող կյանքի մասին:
Ահա թե ինչու Ես երբեմն պատժում եմ այդ հոգիներին, Իմ Գթասրտությունից ելնելով, որ նրանց գիտակացության բերեմ, որպեսզի կարողանամ փրկել:

Տառապանքի միջոցով նյութական բոլոր գրավչությունները, որոնք փնտրվում են զգայարանների կողմից, անիմաստ կդառնան և կերևան այնպիսին, ինչպիսին իրականում կան. **Արագահոս նորույթներ, որոնք անհետանում են կարճ ժամանակում:**
Շատերն են ծնվում այս աշխարհում՝ ուղարկված Երկնքից: Նրանք ընտրում են տառապանքը, ներառյալ աբորտի ենթարկված երեխաները, որպես միջոց՝ մեղավորների համար փրկություն փնտելու:
Մարդկային մտքի համար դժվար է հասկանալ Աստվածային Թագավորությունը, քանի որ ոչ մի մարդ չի օրհնվել այդ ընծայով:
Երբ ընկած հրեշտակները ըմբոստացան Իմ Հոր դեմ, Նա՝ Իմ Հայրը, չեղյալ չհայտարարեց Իր զավակների ազատ կամքը, քանի որ Նա երբեք չի վերցնի այն ընծան, որը տվել է մարդկությանը:
Ողջ մարդկությունը կունենա ազատ կամք, մինչև նրանց կամքը միավորվի Հոր Աստվածային Կամքին:
Սատանան օգտվում է ազատ կամքից: **Նա չի կարող կռվել այն դեպքում երբ ընտրյալ հոգիները հրաժարվում են իրենց ազատ կամքից և այն առաջարում Աստծուն՝ մեղավորներին փրկելու համար:**
Այս զոհողությունը կատարելով՝ տառապանքն ընդունելու միջոցով, Սատանայի ազդեցությունը թուլանում է:
Այդ դեպքում մեղավորները կարող են փրկվել, նույնիսկ այն ժամանակ, երբ չեն ապաշխարել: Սա է այն հրաշքը, որը տառապանքն է:
Ձեր սիրող Հիսուս

Նրանք, ովքեր հավատարիմ են Ինձ, կվերցվեն Նոր Երկինք ու Երկիր մի ակնթարթում, առանց տառապելու

Հինգշաբթի, 26 ապրիլի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Իմ սիրելի աղջիկ, նորից, Ես պետք է ասեմ Աստծո բոլոր զավակներին, որ չանհանգստանան ու չվախենան գալիք իրադարձություններից:
Ողջ մարդկությունն ականատես կլինի Իմ Գթասրտությանը շուտով, և շատերը, մինչ կզոջան իրենց մեղքերի համար, չեն վախենա Ինձնից:
Դրա փոխարեն նրանց հոգիները կհեղեղվեն Աստվածային Սիրով: Իմ Լույսը կճառագայթի նրանց մարմինների միջով, և նրանք կուրախանան:
Խաղաղության Նոր Դարաշրջանի ժամանակը ահռելի ուրախություն և հուզմունք՝ բերում նրանց, ովքեր ճանաչում են Իմ Գթասրտության Ձեռքը:
Յուրաքանչյուր մեղավոր հրավիրվում է ապրելու հավիտենական կյանքով և չպետք է հեռանա այն պատճառով որ շփոթված է:
Խաղաղության Իմ Դարաշրջանը կլինի մի նոր երկիր, ուր տասներկու ազգեր կղեկավարեն Իմ Առաջնորդությամբ:
Դուք կապրեք խաղաղության, սիրո և ներդաշնակության մեջ: Շրջակա բնությունը, որը տեսնում եք երկրի վրա այսօր կխամրի անկարևորությամբ՝ համեմատած այն աշխարհի հետ, որն առջևում է:
Դուք, ովքեր անհանգստացած եք կամ վախենում եք ձեր ընտնիքի անդամների համար, բերեք նրանց ձեզ հետ Իմ հրաշալի Նոր Դրախտը:

Աղոթեք նրանց համար, և Ես նրանց կտամ յուրահատուկ շնորհներ, որպեսզի նրանց տրվի Իմ սերը ճանաչելու ընծան:
Իմ Հոր մեծագույն ցանկությունն է՝ տեսնել այն զարմանքը, ուրախությունն ու սերը, որը կփայլի Նրա թանկագին զավակներից յուրաքանչյուրի միջով, երբ Նա քողազերծ անի Նոր Դրախտը:
Դուք կվերամիավորվեք ձեր սիրելիների հետ, ովքեր մահացել են շնորհի վիճակում և ովքեր հարություն կառնեն մեռածներից:
Ինչու՞ չեք հավատում այսպիսի ընծայի: Երբ վստահեք նորից գալու Իմ խոստմանը, այդ ժամանակ խաղաղություն կզգաք:
Ես միայն խնդրում եմ, որ նախապատրաստվեք աղոթքի միջոցով: Երբ աղոթում եք շնորհի համար և այլոց համար, ամեն ինչ լավ կլինի:
Իմ Գթասրտությունն այնքան մեծ է, որ քչերը չեն կարողանա ճանաչել Աստծո բոլոր զավակներին հավաքելու և նրանց տուն ու Սատանայի ու նրա դև հրեշտակների թունավոր ճիրաններից հեռու տանելու Իմ Աստվածային Խոստումը:
Իմ Թագավորության ճշմարտությունը կտեսնեն նույնիսկ աթեիստները, ովքեր շոկի մեջ կլինեն: Սակայն շատ դեպքերում նրանց անհավատությունը կփոխվի խոնարհ սիրո և համաձայնության:
Չնայած առջևում շատ դժվարին ժամանակներ են, դրանցից ոչ մեկն այնքան դժվար չի լինի, որ չկարողանաք հաղթահարել Իմ՝ ձեր Հիսուսի հանդեպ ունեցած սիրով և նվիրվածությամբ:

Խնդրում եմ, թույլ մի տվեք, որ վախը խանգարի ուրախությամբ ընդունելու Իմ Նոր Դրախտի ընծան:
Նրանք, ովքեր հավատարիմ են Ինձ, մի ակնթարթում, առանց տառապանքի կվերցվեն Նոր Երկինք և Երկիր:
Ձեզ պետք է մտահոգեն այն կարծրացած մեղավորները, ովքեր Ինձ չեն խնդրի ներել իրենց, ովքեր կմերժեն Իմ Ձեռքը և դրա փոխարեն կմնան իրենց չար ուղիներում: Նրանք ձեր աղոթքների կարիքն ունեն:
Շատ աղոթեք նրանց հոգիների փրկության համար:
Ձեր սիրող Հիսուս

Հայր Աստված. Որպես ողջ մարդկության Հայր, Ես պատրաստ եմ ուղարկել Իմ Որդուն՝ պահանջելու իրավամբ Իրեն պատկանող գահը

Շաբաթ, 28 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 03:40

Աղջիկս, այս ամիսները դժվար ժամանակներ էին, ոչ միայն քեզ համար, այլև Իմ բոլոր սիրելի զավակների համար:
Ես Արարչության Հայրն եմ և մի խորը ավյունով սիրում եմ Իմ յուրաքանչյուր զավակի, անկախ նրանից, թե ինչպես են նրանք Ինձ վիրավորում:
Այնքան շատ նախապատրաստություն է անհրաժեշտ օգնելու պատրաստելու համար հոգիներին Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի գալստյան համար:

Հիմա մարդկության մեծ մասը տառապում է հալածանքի պատճառով: Այդ հալածանքը բաղկացած է ոչ միայն աղքատությունից և փողի պակասից, այլև հոգու քաղցից:
Որպես ողջ մարդկության Հայր, Ես պատրաստ եմ ետ ուղարկել Իմ Որդուն, որ ետ պահանջի իրավամբ իրեն պատկանող գահը:
Միայն Ես գիտեմ այդ ժամանակի մասին: Նույնիսկ Իմ Որդին չգիտի այդ ժամանակը: Ես կարող եմ ասել ձեզ, որ դա կլինի շուտով, և որ այս սերնդի մեծ մասը, որն այսօր կենդանի է աշխարհում, կապրի մինչև Իմ Որդու մեծ փառքով վերադարձի օրը:
Հիմա Ես նախապատրաստում եմ հավաքելու Իմ բոլոր զավակներին, մինչ նրանց հեռացնում եմ տառապանքի այն սարսափելի անդունդից, որին նրանք ստիպված են դիմանալ այս անապատում:
Այս անապատը ստեղծվել է Լյուցիֆերի և նրա բոլոր ընկած հրեշտակների ձեռքով, ովքեր թափառում են երկրի վրա Ադամի և Եվայի անկումից հետո:
Այսօր Իմ զվակներից շատերի համար դժվար է հավատալ Ինձ՝ Աստծուն, իրենց Արարչին և Հորը:
Ես օրհնել եմ Իմ զավակներին բանականությամբ և անկախ ազատ կամքով, ուր կարող են ընտրել թե ինչ ձևով ապրեն իրենց կյանքը ըստ իրենց որոշման:
Նրանց դեպի Իմ Թագավորություն ուղղություն ցույց տալու համար Ես տվել եմ Տասը Պատվիրանները, որոնք նետվել են քարերի մեջ:
Նրանք երբեք չեն փոխվել, չնայած դրան, Իմ զավակները կարծում են թե իրենք ավելի խելացի են, քան իրականում, և ստեղծել են նոր իմաստներ, որոնք անընդունելի են Ինձ համար:
Դուրս նետված բոլոր ըների թագավորման այս ժամանակը, ովքեր ողողել են աշխարհը, համարյա ավարտված է:
Ես Իմ բոլոր զավակներին կոչ եմ անում լսել: Երկրի վրա ձեր ժամանակը, ինչպես այն գիտեք, մոտենում է իր ավարտին:
Սակայնկա մի նոր երկիր, մի Նոր Դրախտ՝ ձեզ սպասող:
Այն կգերազանցի ձեր բոլոր սպասելիքները, և նախապատրաստվել է որոշ ժամանակ սիիրով՝ յուրաքանչյուր մարդու, կնոջ և երեխայի համար:
Վերջապես Ես կհրավիրեմ Իմ ողջ թանկագին ընտանիքին, և մենք բոլորս կապրենք ներդաշնակության, խաղաղության, սիրո և ուրախության մեջ հավիտյան:
Նրանք, ովքեր կմերժեն ներս մտնել Նոր Դրախտ, Ես կանեմ հնարավոր ամեն ինչ, որ ետ կանգնեցնեմ ձեզ ձեր մեջքը շրջելուց այն ժառանգության հանդեպ, որն իրավամբ ձերն է:
Ձեր ազատ կամքի ընծայի պատճառով, որը Ես երբեք ետ չեմ վերցնի ձեզնից, ընտրությունը ձերն է:
Ձեզ միայն պետ է, որ շրջեք ձեր գլուխը և բացեք ձեր սիրտը:
Հետո դուք պետք է վազեք գաք Իմ բազուկների մեջ, որ Ես կարողանամ ձեզ տուն տանել:
Սա Իմ ամենաթանկագին և նվիրական ցանկությունն է՝ տանել Իմ բոլոր զավակներին տուն, իարվամբ իրենց պատկանող տեղը:
Ձեր սիրող Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Կույս Մարիամ. Զավակս, մահ չի լինի նրանց համար, ովքեր սիրում են Իմ Որդուն

Կիրակի, 29 ապրիլի, 2012թ, առավոտյան ժ 10:00

Զավակս, դու երբեք չպետք է մտածես, որ այս յուրահատուկ կանչի միայնության պատճառով դարձ տեղի չի ունենում:
Քո առաքելությունը՝ սրբագործված Իմ Հավիտենական Հոր կողմից, Աստծո բոլոր զավակներին Իմ Որդու Երկրորդ Գալուստի մասին ճշմարտության տարածումն է:
Կարևոր է, որ այն զավակները ովքեր ժամանակ չեն անցկացնում Իմ Որդուն պատվելով և երկրպագելով, իմանան թե ինչ է տեղի սպասվում:
Աստծո բոլոր զավակները պետք է ընդգրկվեն ձեր բոլոր աղոթքների մեջ, քանի որ Նա՝ Իմ Հայրը, սիրում է բոլորին:
Նույնիսկ նրանց, ովքեր կարծրացրել են իրենց սրտերն Իմ Հոր հանդեպ և չեն ցանկանում ընդունել Իմ ՈՐդուն, պետք է հավիտենական կյանք տրվի:
ԵՐբ Նախազգուշացման ընծան տեղի ունենա, շատ մեղավորներ կլուսավորվեն և կշրջվեն դեպի Իմ Որդին՝ աղերսելով Նրա Գթասրտությունը:
Միայն այդ ժամանակ մարդկությունը կցանկանա լսել քո միջոցով Իմ ՈՐդու կողմից տրվող կարևոր պատգամներին:
Երբ նրանք հասկանան ճշմարտությունը, որ Նրա Նոր Թագավորության ժամանակը պետք է սկսվի, նրանք կկլանեն Նրա Սուրբ Խոսքը:
Աստծո զավակներից շատերն են շփոթված Երկնքի և երկրի գոյության վերաբերյալ:
Շատերը չափազանց շատ են վախենում մտածել մահվանից հետո կյանքի մասին:
Զավակս, մահ չի լինի նրանց համար, ովքեր սիրում են Իմ Որդուն:
Դրա փոխարեն նրանք կվերցվեն Խաղաղության Նոր Դարաշրջան և այն Դրախտը, որը խոստացել է Իմ Հայրը իր բոլոր զավակների համար:
Դուք պետք է աղոթեք, որ բոլոր հեռացած և կորած հոգիներն իրենց ետդարձի ճանապարհը գտնեն դեպի Իմ թանկագին Որդու սիրող բազուկները, այլապես նրանք համապատասխան չեն լինի մտնել Նոր Դրախտի դարպասներից ներս:
Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Ճշմարտության գրքում պարունակվող առաջին գաղտնիքը բացահայտում է մասոնական խմբավորումների կողմից Եկեղեցու դեմ ուղղված ծրագիրը

Կիրակի, 29 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ. 03:33

Իմ սիրելի աղջիկ, քեզ տրվել է մի ընծա, որը շատերը կմերժեն վախից:

Քեզ տրված շնորհների, ուժի և Սուրբ Հոգու կրակի պատճառով դու ամբողջապես զինված ես՝ հայտարարելու համար այնքան վաղուց աշխարհին խոստացված մարգարեությունները:
Դանիելին տրված մարգարեությունը, երբ նրան ասվեց, որ կնքի Ճշմարտության Գիրքը մինչև ժամանակների վերջը, երբ պարունակությունը կբացահայտվի, հիմա պետք է իրականանա:
Նույնպես Հովհաննես ավետարանչին տրված հայտնությունները տրվել են միայն մասամբ, բայց նրան ցույց է տրվել մի քանի գաղտնիք Յոթը կնիքների փաթեթում:
Նրան թույլ չի տրվել բացահայտել բովանդակությունը: Դրա փոխարեն նրան ասվել է վայր դնել փաթեթը և ուտել այն, որպեսզի կնիքերը հնարավոր չլինի կոտրել, ոչ էլ բացահայտել բովանդակությունը մինչև այս դարաշրջանը: **Փաթեթները կուլ տալու միջոցով մարդկությանը բանալի տրվեց:**
Ճշմարտությունն ուտելու դառնությունը վախ է առաջացնում:
Այն կարող է նաև վիրավորել նրանց, ովքեր ասում են, թե գիտեն մարդկության համար Աստծո բոլոր պլանները: Սակայն ճշմարտությունը՝ այն հզոր սերը, որն Աստված ունի այս երկրի վրա գտնվող յուրաքանչյուր մարդու հանդեպ, քաղցր է նրանց համար, ովքեր ճանաչում են ճշմարտությունը:
Ճշմարտությունը, որ միայն Ես՝ Հիսուս Քրիստոսը, կարող եմ բացահայտել այն գաղտնիքները որոնք տրվել են Հովհաննես ավետարանչին: Քաղցր ճշմարտությունը սիրով կողջունվի նրանց կողմից, ովքեր հետևում են Աստծո ուսուցումներին:
Այնկարող է վախ առաջացնել, բայց Աստծո զորությունը կհաղթահարի ողջ չարիքն ու հալածանքը, քանի որ Նա կարող է ամեն ինչ անել:
Առաջին գաղտնիքն այն փաստն է, որ Աստծո և Նրա բոլոր գործերի դեմ դավ է նյութվում մասոնական խմբերի կողմից, որոնք հիմնադրվել են միջին դարերում:
Նրանց հավատարմությունը չարի հանդեպ է: Նա՝ Սատանան, նրանց աստվածն է, և **նրանք հպարտ են, որ պատվում են նրան սև պատարագների միջոցով:**
Կա նաև Սուրբ Աթոռը, որը կատաղի հարձակման տակ է այդ խմբի կողմից 1967թ ի վեր:
Դանդաղորեն նրանք ներթափանցել են Իմ Եկեղեցի, աչ միայն Վատիկանի ներսը, այլև յուրաքանչյուր երկրի դասերում:
Իմ եկեղեցու նրանց դիտավորյալ թունավորումը հանգեցրել է անմեղ զոհերի վրա կատարվող չար վայրագությունների:
Փողի և իշխանության հանդեպ նրանց ունեցած սերը ոչինչ է համեմատած այն հիվանդագին նվիրվածության հետ, որը նրանք ցույց են տալիս ստերի հորը՝ սատանային: Նրան բացահայտորեն պաշտում են խմբերով և գաղտնի: **Որոշ մասերում քահանաներ և սրբազան սպասավորներ ներառյալ եպիսկոպոսներ, կարդինալներ, իրենց հավատարմությունն են հանձնել այդ խմբին:**
Այն չար գործողությունները, որոնց մեջ նրանք մասնակցում են, բավականին լուրջ են ձեզ բացահայտելու հհամար, բայց իմացեք, որ նրանք առաջարկում են մարդկային զոհեր չարին այն եկեղեցիներում, որ ստեղծված են տալու Սուրբ Պատարագի Սուրբ Հաղորդությունը:
Այդ խումբը, որն այնքան զգուշորեն ծածկում է իր իսկական գործողությունները ճշմարիտ և սուրբ քահանաներից, եպիսկոպոսներից, կարդինալներից և այլ սրբազան սպասավորներից, կատարում է նողկալի գործողություններ:
Նրանք ատում են Աստծուն այնպիսի կատաղությամբ, որ ձեզ շոկի մեջ կգցի: Սատանայի կողմից նրանց տրված զորությունը նշանակում է, որ նրանց չարությունը,

ազահությունը, ցանկություններն ու սեռական շեղումները ողջունվում են նրանց հետևորդների կողմից բոլոր երկրներում:
Նրանք միմյանց ողջունում են մասնավոր նշաններով, որոնք նախատեսված են ցույց տալու միմյանց հանդեպ նրանց ունենցած հավատարմությունը:
Մի բան որոշակի է: Նրանց չար գործողությունները վերջ կունենան, և եթե Նախազգուշացման ընթացքում չշրջվեն դեպի Ինձ, շատ քիչ ժամանակ կունենան նախքան կգցվեն կրակի լճի մեջ, ուր սոսկալի հալածանքով կտառապեն հավիտյան:
Նրանք ստեղծել և տարածել են այն հավատուրացությունը, որը գոյություն ունի աշխարհով մեկ:
Նրանք հասել են դրան Իմ եկեղեցու մեջ ներթափանցելու միջոցով:
Ձեր սիրող Հիսուս
Աստծո Գառը

Ես կոչ եմ անում բոլոր նրանց, ովքեր չեն ճանաչում Ինձ

Երկուշաբթի, 30 ապրիլի, 2012թ, ցերեկվա ժ 05:45

Իմ սիրելի աղջիկ, **Ես պետք է բացատրեմ այն մարդկանց, ովքեր հավատում են Աստծուն, բայց չեն գնում եկեղեցի՝ աղոթելու համար:**
Շատերը չգիտեն ինչպես աղոթել: Մի փոքր նման նրան, աղջիկս, ինչպես դու ես դժվարանում:
Աղոթքը նշանակում է խնդրել:
Աղոթքը նշանակում է հաղորդակցվել:
Աղոթքը նշանակում է ցույց տալ սեր և շնորհակալություն:
Այսօր շատ մարդիկ, լավ մտադրություն ունեցող և մեծահոգի, չգիտեն ինչպես աղոթել: Ոմանց կարծիքով դա տհաճ է և դրանից անհարմար են զգում:
Ուրիշներին կարող է թվալ, թե իրենց աղոթքները նշանակություն չունեն:
Ոհ, ինչպես եմ Ես սիրում այս հատուկ հոգիներին: Այդքան հեռացած, սակայն չնայած դրան որքան եմ Ես տենչում նրանց ցույց տալ Իր խորը սերը:
Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ, ովքեր չեն ճանաչում Ինձ:Կարիք չկա Ինձնից վախենալ:
Դուք միայն պետք է խնդրեք Ինձ որ ձեզ վերցնեմ և սփոփանք տամ:
Թույլ տվեք Ինձ ապացուցել Իմ սերը: Խոսեք Ինձ հետ ձեր սեփական պարզ բառերով:
Ինձ ոչինչ շոկի մեջ չի թողնի:

Ինձ վստահեք ձեր անհանգստությունները, քանի որ Ես կհանգստացնեմ ձեր սիրտը:
Թույլ տվեք Ինձ օգնել ձեզ ճշմարիտ խաղաղություն զգալ:
Խնդրեք Ինձ լուծել ձեր մտահոգությունները: Ես ցույց կտամ ձեզ ճշմարտությունը, այնպես որ ձեր անհանգստություններն այնքան էլ վատ չեն թվա:
Ինչպե՞ս կիմանաք, որ Ես լսում եմ ձեզ:Ինչպես կվստահանաք, որ Ես կպատասխանեմ ձեզ:
Պարզապես հանգիստ նստեք և խնդրեք Ինձ, որ օգնեմ ձեզ այս աղոթքի միջոցով, որը կօգնի ձեզ բացելու ձեր սիրտն Իմ հանդեպ և խնդրելու Իմ օգնությունը:
Խաչակրաց արշավանքի աղոթք (50) **Հիսուս, օգնիր ինձ ճանաչել, թե ով ես Դու**
Ոհ սիրելի Հիսուս, օգնիր Ինձ ճանաչել, թե ով ես Դու
Ներիր ինձ մինչ այժմ ՔԵզ հետ չխոսելուս համար

Օգնիր ինձ խաղաղություն գտնել այս կյանքում և որ ինձ ցույց տրվի
Հավիտենական կյանքի ճշմարտությունը:
Հանգստացրու հոգիս
Թեթևացրու մտահոգություններս
Տուր ինձ խաղաղություն
Բաց արա իմ սիրը հիմա որպեսզի կարողանաս լցնել
Հոգիս Քո սիրով:
Ամեն:
Ձեզանից շատերը չեն գա Ինձ մոտ հիմա: Բայց ոչինչ:
Դժվարությունների, շփոթմունքի և վախի ժամանակ դուք կգաք:
Ես կանգնած ես ձեզ հետ ամեն օր, չնայած դու քսա դեռևս չեք հասկանում:
Բայց շատ շուտով դուք կտեսնեք Ինձ և կիմանաք Մարմնով, Մտքով և Հոգով ձեզ հավիտեանկան կյանք շնորհելու Իմ խոստումի ճշմարտությունը:
Ես սպասում եմ ձեր կանչին: Այդ ժամանակ Ես կկարողանամ վերցնել ձեզ, երբ գա ժամանակը, դեպի Խաղաղության Նոր Դարաշրջանի դարպասները և երկրի վրա Իմ Նոր Դրախտը:
Ձեր ընկեր
Ձեր սիրող Հիսուս